AZG NEW PDF.qxd 18/06/2010 20:28 Page 1

Azg Վազ

19 ՅՈՒՆԻՍ 2010 ՇԱԲԱԹ 113 (4493)

ISSN: 1829-1651

Հայ-հրեական համագործակցություն Բոստոնում

Բոստոնում գործող «Հայ-հրեական կոալիցիան» 12 հազար ստորագրություն է հավաքել, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջով ներկայացնի ԱՄՆ Կոնգրեսին եւ նախագահ Բարաք Օբամային: Ստորագրահավաքի կազմակերպիչները ենթադրում են ստորագրությունները հասցնել 15 հազարի:

Նշելով այդ մասին՝ Նյու Յորքի «Թուրքական» կայքէջն ավելացնում է. «Էլի Լայֆը, որ «Վաշինգտոն թայմսի» հեղինակներից է, RFE/RL ռադիոյի հայկական ծառայության տված հարցազրույցում ասաց, թե Թուրքիա-Իսրայել հարաբերություններում առաջացած ճգնաժամի պատճառով մեծացել են ԱՄՆ հայկական լոբբիի՝ Հայոց ցեղասպանության բանաձեւը Կոնգրեսի օրակարգ մտցնելու հնարավորությունները: 2008-ին հրեական լոբբիստական կազմակերպությունները սկսել էին այդ հարցում չաջակցել Անկարային: Իսկ վերջին ճգնաժամի հետեւանքով, կարծում եմ, այլեւս բոլորովին չեն աջակցի»: Հ. Ց.

Բանակցություններ, թե՞ «փուշ» դիվանագիտություն

Ռուս-հայ-ադրբեջանական հերթականն ու Ալիեւ կրտսերի «փախուստը» Սանկտ Պետերբուրգից

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվս մեկ հանդիպում, որ նպատակ ուներ առաջ մղելու հայ-ադրբեջանական բանակցությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ, տեղի ունեցավ Մոսկվայի նախաձեռնությամբ՝ Սանկտ Պետերբուրգում: Մղեց առաջ, թե ոչ՝ ժամանակը ցույց կտա, բայց ոչ մոտակա, քանի որ այսպիսի հանդիպումների իրական քննարկումների մասին լավագույն դեպքում առարկայորեն կխոսեն միայն նվազագույնը մի տասը տարի հետո:

Սակայն, ինչպես գրեթե միշտ, այս դեպքում էլ հիմնական գնահատականներն ու արդեն տեղի ունեցածի վերլուծություն ներկայացվող կարծիքները առանձնակի ոչ մի արդյունքի մասին չեն խոսում: Դրան հակառակ, բանակցությունների կողմերը ու թեեւ մի որոշ ժամանակ անց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կբարձրաձայնեն «փոքր, բայց առաջ» քայլի մասին կամ էլ միմյանց կմեղադրեն «ապակառուցողական» դիրքորոշման համար:

Հունիսի 17-ի ուշ երեկոյան Սանկտ Պետերբուրգի Կոնստանտինովյան պալատում Ռուսաստանի նախագահ **Դմիտրի Մեդվեդեւը** նախ հիշեցրել է, որ սա վեցերորդ եռակողմ հանդիպումն է: «Վեց անգամ արդեն հանդիպել ենք՝ դա քիչ չէ», նշել է նա, որից հետո, նախաընթացիկ կես ժամ ուշացումով, փակ դռների հետեւում էլ տեղի է ունեցել եռակողմ հանդիպումը: Հանդիպումը մեկնարկել է երեք նախագահների մասնակցությամբ, ապա նրանց են միացել արտգործնախարարները: Տես էջ 5

ՀԱՊԿ-ի օգնությունը Ղրղզստանին՝ մասնագետների խմբի ուղարկում

«**Ազգը**» հունիսի 17-ի համարում տեղեկացրեց, որ Մոսկվայում անցկացված ՀԱՊԿ գլխավոր քարտուղարների նիստում որոշում էր կայացվել՝ «անհապաղ օգնություն ցուցաբերել» Ղրղզստանին, այդ մասին նիստից հետո հայտարարել էր ՀԱՊԿ գլխավոր քարտուղար **Նիկոլայ Բորդյուժան**: Սակայն «Ինտերֆաքս» գործակալության փոխանցմամբ՝ Ղրղզստանին ցուցաբերվող օգնությունը ամենեւին էլ չի ենթադրում այդ երկիր ուղարկել զորամիավորումներ՝ ՀԱՊԿ անդամ երկրներից, այդ թվում՝ Հայաստանից: «Քննարկվում է ոչ թե խաղաղապահների, այլ զանգվածային անկարգությունները կանխելու, հրահրիչներին բացահայտելու եւ չեզոքացնելու հարցերով մասնագետների խումբ ուղարկելու հարցը», նշել է Բորդյուժան: Ըստ նույն գործակալության՝ ՀԱՊԿ անդամ պետություններից միայն Բելառուսը առայժմ չի տվել իր համաձայնությունը վերոհիշյալի կապակցությամբ, այս մասին նշել է Ղրղզստանի Անվտանգության խորհրդի քարտուղար **Ալիկ Օրազովը**՝ ենթադրելով, որ Լուկաշենկոն, այնուամենայնիվ, մինչեւ ուրբաթ օրը կտա իր համաձայնությունը:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանը խախտել է հրադադարը. մահացել է հայ զինծառայող

Համաձայն ԼՂՀ պաշտպանության նախարարության մամուլի ծառայության տարածած հաղորդագրության, հունիսի 16-ին՝ ժամը 10.10-ի սահմաններում առաջնային գծի արեւելյան ուղղությամբ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ խիզախաբար զոհվել է ՊԲ շարքային զինծառայող **Անուշավան Սուրենի Կիրակոսյանը**: ՊԲ առաջապահ ուժերը հակառակորդին պատժելու ուղղությամբ ձեռնարկել են համարժեք գործողություններ:

Հրադադարի ռեժիմի խախտման դեպքեր են արձանագրվել նաեւ հունիսի 16-ի լույս 17-ի գիշերը եւ օրվա ընթացքում: Հակառակորդը փոքր տրամաչափի հրաձգային զենքերով եւ դիպուկահար հրացաններով գնդակոծել է Մեհդիլի, Աշաղը Սեյիդահմեդլի, Չեյիլ լեռ, Յուսուֆջանլու, Քենգեռլի եւ Թաղիբեյլի ուղղություններում տեղակայված ղարաբաղյան դիրքապահների հենակետերը:

Պաշտպանության բանակի առաջապահ ստորաբաժանումների պատասխան գործողություններից հետո հակառակորդը լռել է:

Հայաստանը կարեւորում է ակտիվ շփումները արաբական աշխարհի հետ

Ինչպես տեղեկացնում են արտաքին գործերի նախարարությունից, հունիսի 15-16-ը Հայաստանի Հանրապետության եւ Արաբական պետությունների լիգայի միջեւ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում խորհրդաշնություններ իրականացնելու նպատակով աշխատանքային այցով Երեւանում էր գտնվում Արաբական պետությունների լիգայի պատվիրակությունը, որը ղեկավարում էր կազմակերպության՝ Եվրոպայի եւ արաբա-եվրոպական համագործակցության վարչության պետ Ֆարիս Աբդ ալ Քարիմը:

Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Հ�հ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանի, ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Արման Կիրակոսյանի հետ:

Հանդիպումների ընթացքում նշվել է, որ արաբական աշխարհի հետ հարաբերությունների հետագա ամրապնդումն ու ընդլայնումը Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնայնություններից է, եւ հենց այդ պատճառով որոշում է կայացվել արաբական երկրներում Հայաստանի նոր դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնելու վերաբերյալ:

Կողմերը պայմանավորվել են պարբերական շփումների միջոցով շարունակել համագործակցությունը միջազգային կազմակերպություններում՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերում:

Հ. Ա.

Վուդրո Վիլսոնի անվան մրցանակ Դավութօղլուին

Ստամբուլում դա Թուրքիայի արտգործնախարարին անշամբ հանձնել է «Վուդրո Վիլսոն» կենտրոնի փոխնախագահը

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Վաշինգտոնում գործող «Վուդրո Վիլսոն» միջազգային կենտրոնը Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին պարգեւատրել է «Վուդրո Վիլսոնի անվան հասարակական ծառայության» մրցանակով: Պարգեւատրման արարողությունը տեղի է ունեցել հունիսի 17-ին հենց Ստամբուլում, իսկ մրցանակը Դավութօղլուին անձամբ հանձնել է «Վուդրո Վիլսոն» կենտրոնի փոխտնօրեն Մայքլ Հ. վան Դուսենը: Դավութօղլուի հետ «Վուդրո Վիլսոնի անվան կորպորատիվ քաղաքացիության» մրցանակին է արժանացել նաեւ «Դողուշ հոլդինգի» գործադիր տնօրեն Ֆերիթ Շահենգը:

Պարգեւատրման արարողությանը ներկա են եղել Թուրքիայի սոցպարտ նախարար Օմեր Դինչերը, արտգործնախարար Դավութօղլուի տիկինը՝ Սարեն, երեք դուստրերը, որդին, ինչպես նաեւ պատվիրակության մի շարք հյուրեր, մասնավորապես թուրքական «Պրոֆիլո հոլդինգի» գործադիր տնօրեն Ժակ Կամինի եւ ամերիկյան «Հիաթ գրուպի» գործադիր տնօրեն Թովմաս Պրայցկերը:

Արարողությանը Կամիթի եւ Պրայցկերի մասնակցության մասին հունիսի 17-ին գրել է «Գազեթե պորտս» կայքէջը, իսկ պարգեւատրման՝ «Զամանի» գլխավորությամբ թուրքական գրեթե բոլոր կենտրոնական թերթերը, հիմք ընդունելով «Զիհան» գործակալության հաղորդագրությունը:

Տես էջ 8

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿ

Հայտնի դարձան «Հայը 21-րդ դարասկզբին» գրական մրցանակի դափնեկիրները

Երեկ Գրողների միությունում հայտարարվեցին 2009 թվականին հրատարակված արձակ գործերի համար հայտարարված մրցանակաբաշխության դափնեկիրների անունները: Մրցույթը կրում էր «Հայը 21-րդ դարասկզբին» խորագիրը: Արդեն երրորդ տարին է, ինչ Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ), Համաշխարհային հայկական կոնգրեսը, նախագահ՝ Արա Աբրահամյան, ՀԳ միության հետ համատեղ անցկացնում են գրական ստեղծագործությունների մրցանակաբաշխություն: Գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը** բացելով հանդիսությունը, շեշտեց այն երեք առանձահատկությունները, որոնք մեծ խթան են հանդիսացել գրական ստեղծագործություններ կյանքի կոչելուն: «Մեր համագործակցությունը, նշեց պրն Անանյանը, սկսվեց դեռ 2003 թվականից, երբ Արա Աբրահամյանը 100.000 ԱՄՆ դոլար նվիրաբերեց Գրողների միությանը, եւ հենց դրա հիմքի վրա ստեղծվեց «Գրական հիմնադրամ»: Այդ տարիների ընթացքում հովանավորությունից անցում կատարվեց գրական մշակութային շարժում լայնածավալ գործունեությանը, որի մեջ մտան գիտությանը, կոմպոզիտորներին, նկարիչներին, ժուռնալիստներին ու գրողներին խրախուսելու համար մրցանակաբաշխությունները: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ աստիճանաբար ե՛ւ հասարակության, ե՛ւ պետական շրջանակներում բերեց այնպիսի գիտակցություն, որ հոգեւոր մշակութային ոլորտը դառնա գոնե 2-րդ իշխանություն: Իսկ որ ամենակարեւորն է՝ նման մրցանակաբաշխությունը հզոր խթան եղավ արձակի ժամանակակից զարգացման գործում, որը տարեցտարի կրկնապատկվում եւ եռապատկվում է»:

Տես էջ 2

AZG NEW PDF.qxd 18/06/2010 20:00 Page 1

ԱԶԳ **ԸՆԹԱՑԻԿ**

Երկու տարում ոստիկանություն կբարեփոխվի՞

Երեկ Հայաստանի Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովը կազմակերպել էր լսումներ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում իրականացվող բարեփոխումները» թեմայով: Կարծում էինք՝ ոլորտով հետաքրքրված խաղաղապահական միավորների ներկայացուցիչներից շատերը ներկա կլինեին, օգտագործելով ոստիկանությանը իրենց հուզող հարցերը տալու հնարավորությունը: Բայց այդպես չեղավ, եւ այս լսումները գուցե շահեկան էին օրենսդրական խնդիրները միատեղ դիտարկելու տեսակետից, իսկ որպես ամբիոն օգտագործել ու մասնավոր օրինակով հարցնել, թե ինչպես կարելի է մոտ մեկ ժամ մարդուն ծեծելով սպանել, ու ոստիկանությունը չհայտնվի այդ վայրում, ոչ ոք չհարցրեց, ոստիկանության հանդեպ հասարակության վստահությունը բարձրացնելու՝ բարեփոխումների թիվ 1 խնդիրներից մեկի համատեքստում: Հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանը ներկայացրեց արդեն առկա բարեփոխումների ծրագրի նախապատմությունը. Անվտանգության խորհրդում միջգերատեսչական հանձնաժողով էր ստեղծվել, ոստիկանապետի տեղակալի գլխավորությամբ հանձնաժողովն աշխատել է, սերտորեն համագործակցելով ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի, ընդհանրապես՝ ԵԱՀԿ միջազգային կառույցի հետ: Վերջերս արդեն ավարտուն ծրագիրը Վիեննայում, ԵԱՀԿ կենտրոնակայանում քննարկվել եւ հավանության է արժանացել ԵԱՀԿ գրասենյակի կողմից. «Ես կարծում եմ, որ շատ կարեւոր է, ոստիկանության գործունեության արդյունքում իրականացվող բարեփոխումները մեթոդնդմեթոդ քննարկվեն բոլոր արտյաններում եւ, իհարկե, ԱԺ-ում, պատկան հանձնաժողովում, նաեւ իրազեկելով հասարակությանը, որովհետեւ բարեփոխումների ծավալը մեծ է, ծրագիրը կհաջողվի, եթե խաղաղապահական հասարակությունը մասնակցի այս ծրագրի իրականացմանը», ասաց նա:

Ծրագիրը 10 բաժնից է՝ կազմակերպական, կրթական եւ օրենսդրական բարեփոխումների համադրումով, բաժիններին մեկ-մեկ անդրադարձան ե՛ւ Հրայր Կարապետյանը, ե՛ւ ոստիկանության պետի տեղակալ Արթուր Օսիկյանն իր զեկույցում: Կետ կա բնակչության վստահությանն ամրապնդմանն ուղղված գործողություններին, ոստիկանության աշխատողների սոցիալական եւ իրավական պաշտպանության խնդիրները եւս արացոլված են: Շուրջ 20 օրենսդրական ակտերի ընդունում է նախատեսում ծրագիրը, կառավարության բազմաթիվ որոշումներ եւ կարգի հստակեցումներ են սպասվում այս երկու տարում բարեփոխումների ծրագրով: Մասնավորաբար՝ «Ոստիկանության ծառայության մասին» օրենքի փոփոխությունների մի շարք առաջարկություններ, «Պետական մատնադրոշմային գրանցման մասին» մայր օրենքի մշակման անհրաժեշտությունն է արացոլված ծրագրում, «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքի նոր փոփոխություններ նորից ենթադրվում են, «Զենքի մասին» օրենքի մշակման խնդիրը դարձել է հրատապ, «Քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ պետք է լինեն, որոնք միտված պետք է լինեն ավելի պարզեցնելու եւ հստակեցնելու խաղաղացիություն ստանալու կարգը: Նոր անձնագրային համակարգի հետ կապված օրենքների բավականին մեծ փաթեթ պետք է նախապատրաստվի, Հ. Կարապետյանը կարեւորեց ընտրողների հաշվառման վայրի ցուցակի փոփոխման ավտոմատացման խնդիրը, ընդհանրապես՝ ընտրական օրենսգրքին առնչվող բոլոր տիպի փոփոխությունները, որովհետեւ այս ոլորտում բազմաթիվ թերությունների շտկման անհրաժեշտությունը հրամայական է: Իսկ հակակոռուպցիոն ավելի զորեղ պայքարի անհրաժեշտությունից բխող մի շարք օրենսդրական ակտերի եւ նախաձեռնությունների իրականացումը ծրագրով պարտադիր նախատեսվում է:

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կապինոսը նկատեց, թե Հայաստանի իշխանությունները տարբեր ոլորտներում բարեփոխումների հավակնոտ ծրագրեր են նախաձեռնել, ԵԱՀԿ-ն ողջունում է այդ համարձակ քայլերը եւ մասնավորապես աջակցում իրավապահ մարմիններում սկսված բարեփոխումներին, չնայած հասկանալի է, որ դրանք հեշտ չեն, եւ բարեփոխումների իրականացման ճանապարհին կլինեն տարբեր մարտահրավերներ: Նա հույս հայտնեց, որ Ազգային ժողովը օրենսդրական կարգավորումների առումով մեծ աջակցություն ցույց կտա ծրագրին:

Արթուր Օսիկյանը խիստ մանրամասնորեն եւ տեսական զեկուցումներին հատուկ բնեցնող ոճով ներկայացրեց ծրագիրը. շատ չենք ծավալվի՝ 200 միջոցառում է ներդրված ծրագրում, որոնք կյանքի կոչվելով՝ բարեփոխման 90-95 տոկոսանոց արդյունք պետք է ապահովեն: Նշեց, որ ոստիկանությունում ընդունում են թերությունները, խնդիրների առկայությունը, երբեմն ոչ պատշաճ վարքագծի դրսեւորումները, դրա համար էլ պետք է բարեփոխվել: Նա մանրամասն ներկայացրեց բարեփոխման ուղղությունները. չկրկնելու համար վերը թվարկվածը ավելացնենք, որ կարեւորվեցին նաեւ ճանապարհային ոստիկանության բարեփոխումները, որտեղ հակակոռուպցիոն մեծ փաթեթ է նախատեսված, օրինակ՝ վարորդական վկայական ստանալիս 1 պատուհան է նախատեսված, ձերբակալված անձանց պահման վայրերում պայմանների բարելավման ծրագիրն է մեկնարկել: Հասարակական կարգի պահպանության առումով (մարտի 1-ի դասերն ուսած) ընդունեց, որ կարող են լինել իրավիճակներ, որոնք պարապմունքների ժամանակ նկատի չեն առնվել, այս իմաստով բոլոր իրավիճակներում ոստիկանի պահվածքը կանոնակարգող ուղեցույց է մշակվելու: Եվ ավելացրեց, որ հնարավոր չէ մարդկանց իրավունքը պաշտպանելով՝ այլոց իրավունքները չխախտել, բայց դա պետք է լինի ողջամտության սահմանում (?): Եվ նույնիսկ հասարակության հետ բանակցող ոստիկանի հմտություններ սովորեցնող կարգ պետք է մշակվի, մինչեւ այժմ այդ հարցը բաց է եղել:

Խոսվեց նաեւ վիզաների վարչությունում իրականացվող հակակոռուպցիոն մեծ ծրագրի մասին: Նոր, կենսաչափական տվյալներով անձնագրերի ներդրումը նույնպես բարեփոխումների ծրագրում է՝ 2011-ից արդեն այդ անձնագրերը կտրվեն, սակայն հին անձնագրերը նույնպես ուժի մեջ կլինեն, մինչեւ լիակատար փոխարինումը նորով: Նոր անձնագրերով ավելի դյուրին կլինի այլ երկրներ մուտքի արտոնագիր ստանալն ու տեղաշարժվելը:

Լրագրողներս սպասում էինք Ա. Օսիկյանին ուղղվող սուր հարցերին, որոնք պետք է արացոլեին ոստիկանության բուն խնդիրների համալիրը: Սակայն հարց տվող պատգամավոր էլ համարյա չեղավ՝ Օսիկյանին ուղղված մեկ-երկու հարցը այսպես կոչված համակարգահեն էին, ու այդպես էլ քննարկման մասնակից ոստիկաններին ոչ ոք չասաց այն, ինչ նրանք գիտեն, բայց ինչը ձեւավորել է հասարակության իրական վերաբերմունքը ոստիկանության հանդեպ տածած վստահության աստիճանի, իսկ ավելի ստույգ՝ անվստահության մասին:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020 թվականին շուրջ 300 միլիոն մարդ տառապելու է շաքարային դիաբետով

Շաքարային դիաբետը աշխարհի ծանրագույն հիվանդություններից է եւ, ցավոք, զարգանում է արագ տեմպերով: 2000 թվականին ամբողջ աշխարհում շաքարային դիաբետով տառապում էր շուրջ 100 միլիոն մարդ, բայց, ըստ մասնագետների, 2020-ին հիվանդների թիվը հասնելու է մինչեւ 300 միլիոն:

«Առողջության համար պակաս վտանգավոր չեն շաքարային դիաբետից առաջացող բարդությունները՝ արտամկանի սուր ինֆարկտը, փտախտը, ինսուլտը, երիկամային անբավարարությունն ու կուրությունը», երեկ «Դե ֆակտո» ակումբում տեղեկացրեց առողջապահության նախարարության գլխավոր էնդոկրինոլոգ **Էդվարդ Թորոմանյանը**:

Երեք տարի առաջ ՄԱԿ-ն ընդունեց բոլոր պետությունների կառավարություններին ուղղված մի հռչակագիր, որը կոչ է անում պետություններին ավելի շատ ուշադրություն դարձնել շաքարային դիաբետով տառապող հիվանդների խնդիրներին:

Շաքարային դիաբետը լինում է առաջին եւ երկրորդ տիպերի՝ թիվ 1 դիաբետ եւ թիվ 2 դիաբետ: Էնդոկրինոլոգը նշեց, որ այսօր Հայաստանում գրանցված հիվանդների թիվը, որոնք տառապում են շաքարային դիաբետով, արդեն գերազանցում է 40 հազարը:

Հիվանդության զարգացմանը նպաստում են մի շարք գործոններ, որոնցից առաջնահերթը, ըստ մասնագետի, ժառանգականությունն է:

«Եթե ծնողներից մեկն ունի շաքարային դիաբետ, ապա հետագա սերունդների մեջ հիվանդության զարգացման հնարավորությունը կազմում է 50 տոկոս: Եթե 2 ծնողներն են տառապում շաքարային դիաբետով, ապա հիվանդության զարգացման հնարավորությունը հասնում է մինչեւ 80 տոկոսի», ասաց է. Թորոմանյանը:

Հիվանդության զարգացմանը նպաստում են նաեւ ճարպակալումը, արյան բարձր ճնշումը, ցածր ֆիզիկական ակտիվությունը, սթրեսները եւ այլն:

«**Ազգի**» հարցին՝ պետության կողմից ի՞նչ աջակցություն են ստանում այս հիվանդությամբ տառապող մարդիկ , մասնագետը պատասխանեց, որ ծանր հիվանդը ստանում է հաշմանդամության կարգ եւ կարող է բուժվել պետպատվերի շրջանակներում: Բանախոսը հավելեց, որ շաքարային դիաբետ ունեցող բոլոր հիվանդներն ինսուլինը ստանում են անվճար:

Ի. Պ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿ

Հայտնի դարձան «Հայը 21-րդ դարասկզբին» գրական մրցանակի դափնեկիրները

1-ին էջից

Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել 20 գրողներ, որոնցից 5-ը դարձել են դափնեկիր: Մրցանակային ֆոնդը ՌՀՄ-ն սահմանել է 16.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Առաջին մրցանակը կիսվել է Անահիտ Թոփչյանի («Անհետացում» վեպ) եւ Հովհաննես Երանյանի («Ամենագեղեցիկ հասվածը» վեպ) միջեւ: Լավագույն վիպակի մրցանակը բաժին է հասել Սուսաննա Հարությունյանին «Քարտեզ առանց ցամաքի եւ ջրի» ստեղծագործության համար, իսկ լավագույն պատմվածքաշարի համար մրցանակի է արժանացել Սամվել Կոսյանը: «Ծաղրածուն մեծ քաղաքում» վիպակի համար Նորայր Ադալյանը արժանացել է հատուկ մրցանակի:

ՌՀՄ փոխնախագահ Վլադիմիր Աղայանը շնորհավորեց դափնեկիրներին ու մաղթեց նորանոր հաջողություններ արդի հայ արձակի զարգացման գործում: Պրն Աղայանը շեշտեց, որ ՌՀՄ-ն եւ Համաշխարհային հայկական կոնգրեսը այս շարժման նախաձեռնողներն են՝ համապատասխան ստեղծագործական, գիտական եւ մշակութային կազմակերպությունների հետ: Այս տարվա հինգ բնագավառներում անցկացվող մրցանակաբաշխությունը նվիրված է Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանին: Այդ տարիների ընթացքում միության կողմից իրականացվել են բազմաբնույթ ծրագրեր, որոնց «**Ազգը**» պարբերաբար անդրադարձել է: Եթե սկզբնական շրջանում դրանք կրում էին հումանիտար բնույթ, ապա տարիներ անց գործելաոճը փոխվեց, ու ստեղծվեցին «Գրականության զարգացման հիմնադրամ», «Գիտության զարգացման հիմնադրամ», որոնք նոր զարգացման էտապով սկսեցին իրենց գործունեությունը:

Պրն Աղայանը նշեց. «Մեր գործունեության հիմնական նպատակն է նպաստել մեր հանրապետության ստեղծագործական ներուժի ակտիվացմանը: Ուրախ ենք, որ բոլոր բնագավառներում հետաքրքրությունը մրցանակաբաշխությունների նկատմամբ մեծացել է ու նաեւ ներկայացվող աշխատանքների թիվը գնալով ավելանում է»: Պրն Աղայանը նաեւ նշեց, որ 2008 թ. մրցույթները դարձան համահայկական, ձեռք բերեցին միջազգային կարգավիճակ, որոնք անցկացվում է ՀՀԿ, ՌՀՄ, ՀՀ սփյուռքի նախարարության եւ համապատասխան գիտական ու ստեղծագործական կազմակերպությունների հետ համատեղ:

Մրցույթի հանձնաժողովի նախագահ, դոկտոր, պրոֆեսոր **Ալլիտա Դոլուխանյանը** նշեց. «Այս մրցույթը չէր կայանա, եթե չլինեին այդ հեղինակավոր կազմակերպությունները Արա Աբրահամյանի գլխավորությամբ ու մեկենասությամբ»: Այնուհետեւ տկն Դոլուխանյանը նշեց, որ ներկայացված 20 գործերի հեղինակները հայտնի չէին, քանզի դրանք ծածկագրով էին ներկայացված: Դափնեկիրները ընտրվել են բացառիկ արդարության պայմաններում, եւ հաշվի է առնվել գրական գործի արժեքը, այլ ոչ թե անձը, որով մեծ նպաստ է բերվել արդի հայ արձակի հետագա զարգացմանը: «Արա Աբրահամյանը մտածում է, որ Հայաստանը պետք է լինի հոգեւոր Հայաստան, եւ իրականացնում են այնպիսի գնահատելի զարգացման ծրագրեր, որոնց համար երախտագիտության խոսքեր եմ հղում ե՛ւ պարոն Աբրահամյանին, ե՛ւ կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությանը՝ հանձին փոխնախագահ Վլադիմիր Աղայանի»:

Իրենց շնորհակալական խոսքը հղեցին մրցույթի կազմակերպիչներին դափնեկիրները ու շեշտեցին, որ առաջին անգամն է, որ նման անաչառ ու անշահախնդիր մրցանակաբաշխություն է անցկացվում, որը նոր լիցք ու եռանդ է տալիս ստեղծագործելու:

Ջերմ ու մտերմիկ միջավայրում դափնեկիրները շնորհավորանքներ էին ստանում, իսկ մրցանակների հանձնման արարողությունը տեղի կունենա հուլիսի 1-ին գումարվող Գրողների միության համահայկական համաժողովի ընթացքում՝ ձեռքբերումներ Արա Աբրահամյանի:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«Սարդարապատը» ՀԱԿ-ին էլ չի հավատում

Երեկ ՀԱԿ-ի գործելաոճին ոչ բառացի, սակայն տողատակերով անվստահություն են հայտնել նախկինում ՀԱԿ դաշնակիցներ հանդիսացող «Սարդարապատ» քաղաքական նախաձեռնության անդամները:

Նախաձեռնության այլընտրանքային «Ազգային ժողովի» արտաքին գործերի հանձնաժողովի անդրանիկ նիստում կինոռեժիսոր **Տիգրան Խզմալյանն** անդրադառնալով իշխանությունների վարած քաղաքականությանն, ասաց, որ նրանք ձախողել են ոչ միայն արտաքին, այլեւ ներքին քաղաքականությունը: Հետեւաբար անհրաժեշտ է ստեղծել կուսակցական պատկանելությունից եւ գաղափարախոսությունից անկախ ամբիոն:

Նրա խոսքով՝ ստեղծելու են հայաստանակենտրոն ուժ, որը պետք է կատարի մշտական վերլուծություն արտաքին գործերի վերաբերյալ եւ փորձի հասարակական շահից բխող ճանապարհներ առաջարկել: Խզմալյանի մեկնաբանությամբ՝ իրենք դասական ընդդիմություն չեն եւ չեն պայքարում իշխանության գալու համար: «Մեզ հարցնում են՝ ինչո՞ւ ՀԱԿ-ի հետ չեք անում ծրագիրը, ՀԱԿ-ին հաջողություն ենք մաղթում հերթական «արտահերթ» ընտրություններում, որը, մեր կարծիքով, չի լինելու: Եթե նույնիսկ արտահերթ խորհրդարանական ընտրություններ լինեն, ՀԱԿ-ին կհաջողվի ընդամենը 5-6 մանդատ ստանալ»:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ. առով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 18/06/2010 20:00 Page 1

ԱԶԳՈՒՅԺԱՌ

Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի ղեկավար **Արիստոմենե Վարուդակիսը** մեկ շաբաթ հետո ավարտելու է իր երեք տարի տեւած գործունեությունը Հայաստանում, ինչը լրագրողների հետ երեկվա հանդիպման առիթն էր: Գրասենյակի ղեկավարը նախ ներկայացրեց ՀԲ այն 6 ծրագրերը, որոնք գտնվում են հաստատման փուլում եւ որոնք մինչեւ եկող տարվա առաջին եռամսյակ հաստատված կլինեն: Խոսքը

Տնտեսական մրցակցության եւ հարկային-մաքսային վարչարարության բարելավումը Հայաստանում

Հրաժեշտի մամուլի ասուլիսի ժամանակ առանձնացրեց Արիստոմենե Վարուդակիսը

154 մլն դոլար արժողությամբ ծրագրերի մասին է, որոնք ավելանալու են իրականացման փուլում գտնվող 270 մլն դոլար ծրագրերին:

Ծրագրերից առաջինը՝ 40 մլն դոլար արժողությամբ, գյուղական ժանապարհների վերանորոգման ծրագիրն է, որի շրջականներում նախատեսվում է նորոգել 190 կմ ճանապաsh, այդ թվում՝ Հալիձոր-Տաթեւ ճանապարհը, որը կնպաստի երկրի հարավում զբոսաշրջության զարգացմանը: Երկրորդը Մեղրու, Աբովյանի, Ալավերդու մարզային հիվանդանոցների եւ 30 գյուղական ամբուլատորիաների վերակառուցման եւ նոր սարքավորումներով համալրելու ծրագիրն է՝ 15 մլն դոլար արժողությամբ: Երրորդը՝ 44 մլն դոլար արժողությամբ, ուղղված է լինելու գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը՝ մասնավորապես հեռավոր շրջաններում անասնապահության զարգացմանը եւ բրուցելոզ հիվանդության դեմքերի նվազեցմանը: Չորրորդ ծրագրով կփոխարինվեն էլեկտրափոխանցման էլեկտրաշարերը Հրազդանի ՋԷԿ-ից մինչեւ երկրի հարավ, որը կարժենա 36 մլն դոլար: 24 մլն դոլար արժողությամբ 5-րդ ծրագրի միջոցներն ուղղվելու են Հայաստանում էլեկտրոնային հասարակության զարգացմանը՝ բարձր արագությամբ էլեկտրոնային մալուխների կառուցման, «համակարգիչ բոլորի համար» ծրագրին, բիոմետրիկ անձնագրերի ներդրման, Գյումրիի տեխնոպարկին աջակցելուն: Վեցերորդ ծրագիրը 25 մլն դոլար արժողությամբ բյուջետային վարկն է, որը պետք է աջակցի կրթական եւ առողջապահական ոլորտների բարեփոխումներին, հանրադյունաբերության ոլորտում ժամանակակից օրենսդրության մշակմանը, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կարողությունների, հարկային եւ մաքսային վարչարարության բարելավմանը:

Վերջին ծրագրի առնչությամբ տրված հարցերին պատասխանելով՝ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարն ասաց, որ գումարների տրամադրումը կախված է նրանից, թե ինչ առաջընթաց է արձանագրվում արդեն իսկ տրամադրված գումարներով ծրագրերի իրականացման հարցում: Եթե նոր գումարներ են տրամադրվում, ապա, ըստ Արիստոմենե Վարուդակիսի, նշանակում է, որ առաջընթաց կա, բայց ՀԲ-ն կցանկանար, որ ավելի արագ տեղի ունենային բարեփոխումները հատկապես տնտեսական մրցակցության պաշտպանության եւ հարկային ու մաքսային վարչարարության բարելավման ոլորտում: «Եթե որոշ տնտեսվարողներ հարկերը կամ մաքսերը չեն վճարում, դա խաթարում է մրցակցությունը», ասաց նա եւ ավելացրեց, որ տարբեր գնահատականներով սվերային տնտեսությունը Հայաստանում կազմում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 35-40 տոկոսը:

«**Ազգի**» հարցին, թե ճգնաժամին նախորդող տարիներին շինարարության բուռն աճն արդյո՞ք պետք է բացասական համարել, եթե նկատի ունենանք, որ այն նպաստում էր նաեւ շինանյութերի արտադրության, ծառայությունների եւ այլ ոլորտների աճին, ինչպես նաեւ՝ Հայաստանի բնակֆոնդը շատ հին է եւ նորացման կարիք ունի, Արիստոմենե Վարուդակիսը պատասխանեց, որ շինարարությունը պետք է զարգանա, բայց պետք է ունենա իր պահանջարկը: «Առաջարկն ու պահանջարկն իրար հետ համահունչ պետք է զարգանան: Սակայն Հայաստանում շինարարության աճն ավելի է եղել, քան պահանջարկն է, ինչը մենք անվանում ենք փուչիկ», եզրափակեց նա:

Մամուլի ասուլիսի վերջում Արիստոմենե Վարուդակիսը նշեց, որ իր համար շատ հաճելի էր Հայաստանում աշխատելը եւ որպես զբոսաշրջիկ հետագայում անպայման կրկին կայցելի մեր երկիր: Հարցին, թե Հայաստանի հատկապես ո՞ր մարզն է նրան դուր եկել, ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարը պատասխանեց, որ իրեն հատկապես գրավել է Հայաստանի հարավը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԲ-ն Հայաստանի համար կանխատեսում է 4-5 տոկոս տնտեսական աճ

Հայաստանի մակրոտնտեսական իրավիճակի մասին խոսելով՝ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավար Արիստոմենե Վարուդակիսն ասաց, որ թվում է, թե ճգնաժամի ամենասուր փուլը Հայաստանի համար հետեւում է մնացել, գրանցվել է 7,2 տոկոս տնտեսական աճ, եւ ՀԲ աջակցությամբ կառավարության իրականացրած հակաճգնաժամային քայլերն արդյունավետ են եղել: Նա առանձնացրեց այն հանգամանքը, որ այս տարվա 4 ամիսների տնտեսական աճը հավասարապես է բաշխվել տնտեսության բոլոր ճյուղերի վրա: Այդուհանդերձ, Համաշխարհային բանկի կանխատեսմամբ, Հայաստանի տարեկան տնտեսական աճը կլինի 4-5 տոկոս, իսկ գնաճի ցուցանիշը չի ավելանա: Արիստոմենե Վարուդակիսը կարեւորեց դիվերսիֆիկացված տնտեսական աճի կարեւորությունը, որի դեպքում այն գուցե 12-14 տոկոսի փոխարեն կազմի 7-8 տոկոս, բայց կլինի ավելի կայուն:

Ա. Մ.

ԹՈՒՐՔԱԳԵՏԵՐ

Հայ-թուրքական հարաբերությունները՝ «լուռ դիվանագիտության» փուլում

Տարածաշրջանում կատարվող իրադարձությունների՝ հատկապես թուրք-իսրայելական ճգնաժամի պայմաններում վերլուծելով հայ-թուրքական հարաբերությունները, թուրքագետ Արտակ Շաքարյանը ուշադրություն է հրավիրում ԱՄՆ արտաքին քաղաքականությունում կատարված փոփոխությանը: «Մերձավոր Արեւելքի տարածաշրջանից մի տեսակ ինքնամեկուսացվել է եւ ակտիվ դերակատարություն չի դրսեւորում, ինչի պարագայում Թուրքիան է ակտիվացել: Թուրքիայի յուրաքանչյուր ակտիվությունը պետք է բացասական դիտարկել Հայաստանի համար՝ հայ-թուրքական եւ արցախյան հակամարտության համատեքստում: Քայլ առաջ Թուրքիայի համար, նշանակում է քայլ հետ Հայաստանի համար», ասաց նա: Թուրքագետ, «Ազգ» օրաթերթի քաղաքական մեկնաբան Հակոբ Չաքրյանն էլ փաստեց, որ Թուրքիային զուգահեռ ակտիվանում է նաեւ Ռուսաստանը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության պասիվացումն էլ պայմանավորում է ԱՄՆ-ի հակաիրանյան եւ հակաաֆղանական պատերազմներում պարտությամբ:

Արտակ Շաքարյան

Հակոբ Չաքրյան

Չաքրյանի մեկնաբանությամբ՝ տարածաշրջանում առկա իրավիճակը չի նպաստի հայ-թուրքական հարաբերությունների աշխուժացմանը: «Թուրք-իսրայելական ճգնաժամի պատճառով սրվել են թուրք-ամերիկյան հարաբերությունները, ուստի ամերիկացիները չեն կարող անհրաժեշտ ճնշումներ գործադրել թուրքական կողմի վրա, որ Անկարան ընդառաջ քայլ կատարի հայ-թուրքական հարաբերություններում մերձեցման գործընթացն առաջ տանելու համար»:

Թուրքագետները փաստում են, որ հայ-թուրքական հարաբերությունները չեն ընդհատվել. որոշակի փուլում կանգ են առել, եւ մեկնարկել է լուռ դիվանագիտության փուլը: Չաքրյանը պատմում է, որ Անկարայից հայտարարություններ են հնչում, թե հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ շփումները շարունակվում են փակ դռների հետեւում, սակայն դրանով թուրքերը շփումների պատրանք են ստեղծում՝ հնարավոր ճնշումները չեզոքացնելու համար: «Այդ պայմաններում հայկական կողմը պետք է հրաժարվեր շփումներից՝ թույլ չտալով Անկարային շփումների պատրանքը ծառայեցնել սեփական շահերին»:

Անդրադառնալով Քնեսեթում Հայոց ցեղասպանության հարցի քննարկմանը՝ Շաքրյանն այն որակեց Անկարային վախեցնելու եւ ճնշում գործադրելու փորձ՝ առաջարկելով չմոռանալ, որ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության մասին օրինագծի տարալման հիմնական դերակատարը հրեական լոբբին է, Իսրայելն ու Հայաստանը պատմական դիվանագիտական հարաբերություններ չունեն: Նա հայ-իսրայելական հարաբերություններում առագա չի տեսնում, որովհետեւ Հայաստանն արաբական աշխարհում բազմաթիվ համայնքներ ունի, եւ այդ դաշինքը բացասական ազդեցություն կունենա համայնքների վրա:

Հակոբ Չաքրյանի համար անհասկանալի է թուրք-իսրայելական ճգնաժամի ու լարվածության վերաբերյալ հայկական շրջանակների ոգեւորությունը: «Ճգնաժամի հիմքում թուրքական կողմի ձգտումն է՝ հակահրայելական կեցվածք ընդունելով արաբական իսլամական աշխարհում ամրապնդել դիրքերը, իսրայելական կողմն էլ թուրքական սպառնալիքներին կոշտ պատասխան տալով փորձում է Գազայի հատվածում պահպանել ստատուս քվոն: Եթե այդ համատեքստում հույսեր ենք փայփայում, որ կճանաչվի Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրինագիծ՝ ընդունում ենք, որ այդ հարցը կարելի է շահարկել: Եթե Իսրայելը Թուրքիային վախեցնելու համար ճանաչի Հայոց ցեղասպանությունը, որեւէ մեկին երախտապարտ չպետք է լինենք, որովհետեւ ճանաչել է մարդկության դեմ կատարված հանցագործություն», ասաց նա

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ:

Հանրային խորհուրդը առաջարկությամբ կդիմի կառավարությանը՝ հրաժարվելու «Լեզվի մասին օրենքում» փոփոխությունների նախաձեռնությունից

Ինչպես տեղեկացնում է Հանրային խորհրդի մամուլի ծառայությունը, Հանրային խորհրդի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին հարցերի հանձնաժողովը հունիսի 17-ի նիստում քննարկել է օտարալեզու դպրոցների խնդիրը եւ երկու կետից բաղկացած որոշում ընդունել, որտեղ նշվում է.

1. Առաջարկել ՀՀ կառավարությանը՝ հրաժարվել օրենսդրական այդ նախաձեռնությունից եւ հետ վերցնել «Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու օրինագիծը:

2. Առաջարկել Հանրային խորհրդին՝ դիմել ՀՀ կառավարությանը՝ մշակելու եւ մեկ ամսվա ընթացքում հանրային քննարկման ներկայացնելու ՀՀ հանրային կրթության մակարդակը բարձրացնելու իր մոտեցումներն ու ծրագիրը:

Որոշման ներածական մասում հանձնաժողովը կարեւորում է օտար լեզուների դասավանդման մակարդակի բարձրացումը հանրակրթական ուսումնական հաստատություններում եւ արդիական ուսման ձեւերի կիրառումը մեր կրթական համակարգում:

Հանձնաժողովը գտնում է, որ վերը նշված նախագծում առաջարկվող փոփոխությունները չեն բխում մեր ազգային եւ պետական շահերից: Ավելին՝ կառավարությունը սույն օրինագիծը նախապատրաստելիս չի ղեկավարվել Հայաստանի Անկախության հռչակագրի 12-րդ կետով, ըստ որի. «Հռչակագիրը հիմք է ծառայում ՀՀ սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ փոփոխությունների եւ լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար»: Այս օրենսդրական նախաձեռնությունը հակասում է ՀՀ Անկախության հռչակագրի 10-րդ կետին, ըստ որի՝ «ՀՀ-ն ապահովում է հայերենի՝ որպես պետական լեզվի, գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության եւ մշակույթի սեփական համակարգ»:

Հ. Ա.

Արդարադատության նախարարները ստորագրեցին հուշագիր

Երեկ Ստեփանակերտում Արցախի եւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարները ստորագրել են համագործակցության հուշագիր:

Երկու կառույցների համագործակցությունը տարիների պատմություն ունի, եւ համատեղ ստորագրված փաստաթուղթը հնարավորություն կտա այն խորացնելու: Նախատեսվում է ստեղծել աշխատանքային խմբեր, որոնք կզբաղվեն իրավական ակտերի համատեղ մշակմամբ:

ՀՀ արդարադատության նախարար **Գեւորգ Դանիելյանն** ընդգծել է մասնագետների վերապատրաստման գործընթացը, որը, նրա խոսքով, պարբերական բնույթ կկրի: Այսուհետեւ փաստաթղթեր կազմելիս, նշել է ՀՀ արդարադատության նախարարը, անպայման հաշվի կառնվեն հուշագրի դրույթները:

Հուշագիրը նախատեսում է նաեւ համատեղ մշակութային ու մարզական միջոցառումների անցկացում, ինչը երկու գերատեսչությունների ղեկավարների համոզմամբ՝ կնպաստի գործընկերային հարաբերություններն առավել ջերմացնելուն:

ՀՀ արդարադատության նախարարին ու նրա տեղակալ Էմիլ Բաբայանին նույն օրն ընդունել են ԼՂՀ նախագահն ու վարչապետը: Երկու հանդիպումների ընթացքում էլ տեղի են ունեցել բովանդակալից զրույցներ, քննարկվել փոխգործակցության դաշտը բարելավելուն միտված հարցեր: Կարեւորվել է հուշագրի նշանակությունը նպատակային համագործակցություն ծավալելու համար:

Հուշագրի ստորագրումից հետո լրագրողները հարցեր են ուղղել նախարարներին:

Այն հարցին, թե Հայաստանի օրինակով՝ ԼՂՀ-ում քրեակատարողական հիմնարկները ե՞րբ կարող են տեղափոխվել արդարադատության նախարարության ենթակայության տակ, արցախյան կառույցի ղեկավար Նարինե Նարիմանյանը պատասխանել է, որ դեռեւս չլուծված խնդիրներ կան այդ բնագավառում, մասնավորապես, կապված մասնագետ կադրերի պատրաստ չլինելու հետ: Իսկ ՀՀ նախարարը հավելել է, որ շատողականություն դրսեւորելը կարող է միայն վնասել գործընթացին:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ստեփանակերտ

AZG NEW PDF.qxd 18/06/2010 20:01 Page 1

ԱԶԳ

Երրորդ կյանք

«Ես իմ երեխային երբեք մանկասուն չեմ հանձնի»

Աննա Ղազարյանը «Զատիկ» մանկասուն է եկել 7 տարեկանում: Նրան մանկասուն է հանձնել մայրը, իսկ հորը չի ճանաչում: «Ինձ մայրս վաղուց է թողել, եւ միայն 10-րդ դասարանում շաս դասահանորեն գտա նրան: Հիմա նրան հաճախ չեմ հանդիպում: Ինքը չի ուզում ինձ տեսնել, բայց ես ուզում եմ տեսնել նրան: Նա ինձ չի օգնել, ես ուզում եմ օգնել նրան: Նա ինձ որբ է թողել, ես չեմ կարող նույն կերպ վարվել նրա հետ», ասում է Աննան, ում հետ ծանոթացա «Զատիկ» մանկասանը, երբ եկել էր այցելության:

Աննան ասում է, որ ինքը չարությամբ չի լցված իր ծնողի հանդեպ. նա պարզապես փորձում է հետ բերել այն ծնողական սերը, որ չի ստացել, եւ այն ջերմությունը, որը ոչնչով չի փոխարինվի. «Մի տեսակ նախանձ ոնց որ լինի մեջս: Ծնողի կարիք ես զգում, ուզում ես ծնող ունենալ: Հիմա ուզում եմ վերցնել նրանից էդ խաղցությունը, բայց չի տալիս, ու ես նորից կարոտում եմ: Ես նրանից միայն դա եմ ուզում», բացատրում է Աննան:

Հիմա Աննան արդեն իր սեփական ընտանիքն ունի, եւ իր ասելով՝ ինքը փորձում է ստեղծել այն ընտանիքը, որը չի ունեցել, դրա համար էլ չստացած սերը տալիս է իր զավակին. «Կուզեմ նրան տալ ամեն ինչ: Ամեն անգամ, երբ գրկում եմ նրան, մի տեսակ լացս գալիս է, ուզում եմ նրան տալ իմ հոգու ողջ ջերմությունը, որ ես չեմ ստացել. ես չեմ ունեցել. նա պիտի ամեն ինչ ունենա»:

Աննան վստահ է՝ ինքը երբեք չի հանձնի իր երեխային մանկասուն, քանի որ գիտի՝ վաս ընտանիքը լավ մանկասնից լավ է. «Ես կարծում եմ՝ ծնողը, ինչ էլ լինի, չպետք է երեխային թողնի: Դա մեծ պատասխանատվություն է: Եթե ունենում է, չպետք է տա մանկասուն: Ես երբեք չեմ հանձնի իմ բալիկին մանկասուն»:

Աննան ծանոթացել է իր ամուսնու հետ դեղատանը՝ աշխատավայրում. «Եվ աշխատում էի, եւ դասի գնում, որ հասցնեմ, դրա համար էլ շաս էի բացակայում: Նա գիտեր՝ մանկատան երեխա եմ: Անցավ ժամանակ, ու մենք որոշեցինք՝ պիտի ամուսնանանք: Նրա ընտանիքը շաս լավ ընդունեց ինձ: Հետս լավ են վերաբերվում: Ես գտա ընտանիք»:

Աննան ընդունվել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական ուսումնարան, սակայն կիսատ է թողել, որովհետեւ պետք է իր երեխային մեծացնի: Նա շարունակելու է իր ուսումը, որ կիսատ է թողել: «Ես եմ ընտրել մասնագիտությունս: Տեսրերիս վրա նկարում էի, որտեղ պատահեր, նկարում էի: 8-րդ դասարանում ասացի՝ ուզում եմ դառնալ նկարչուհի: Ընկեր Աշոտը՝ մեր տնօրենը, դրական արձագանքեց, ուրախացավ: Հիմա էլ նկարում եմ, աշխատանքներ եմ անում: Երեխաս մի քիչ էլ մեծանա, կսովորեմ»:

Աննան պատմում է, որ նախքան ուսանող դառնալը երբեք չի զգացել առանձնահատուկ վերաբերմունք իր նկատմամբ՝ իբրեւ մանկատան սանի. «Դպրոցում, երբ մանկասնից 20-25 երեխա կար, շաս լավ էի զգում, երբեք չեմ զգացել հատուկ վերաբերմունք, որովհետեւ մանկատան սաներով միշտ միասին էինք, բայց ուսանողական տարիներին ես դա շաս լավ զգացի»:

Աննան չի սիրում, երբ իրեն խղճում են, քանի որ կարծում է՝ այդ զգացմունքը նույնիսկ ստորացնում է: «Երբ իմանում են՝ մանկատնից ես, սկսվում է խղճահարության մի գործընթաց, ու փորձում ես, որ մարդիկ չիմանան: Թերլեմեզյանում չեն իմացել: Վերջին տարում, երբ սկսեցի շաս բացակայել, քանի որ աշխատում էի, ծնող կանչեցին: Գնաց իմ դասատուն: Ամեն ինչ բացվեց: Դրանից հետո սկսեցի ավելի շաս բացակայել: Ամաչում էի, քանի որ ասել էի՝ ծնող ունեմ, մանկատան երեխա չեմ: Դրանից հետո ավելի վատ էի զգում: Մի խոսքով... Մենակ էն, որ տարբեր առիթներով գումար էինք հավաքում, տնօրենն էլ, ամենքն էլ փորձում էին օգնել, բայց ամեն ինչ էդքան հեշտ չէր... ՀՕՄ-ից էլ են շաս օգնել, բոլորն էլ: Բայց ուսանող լինել, ներկերը, միջոցառումները, հագուստը, զբոսանքները, ամեն ինչ... բարդացել էր: Պետք էր աշխատել: Դրա հետ էլ ես չէի հասցնում»:

18 տարին լրանալուց հետո «Զատիկի» երիտասարդ աղջիկներն ադրում են առանձին տանը, որտեղից Աննան դուրս է եկել ճերմակ հարսանեկան զգեստով ու գնացել իր ամուսնու տուն: «Մանկատան հետ կապված ամենավատ պահն էն էր, որ մանկատնից գնացի: Հարսանիքով եմ գնացել: 15 աղջիկ էր էդ տանը մնում, ու բոլորին սիրում էի: Շաս տխուր էր, չէի ուզում գնալ: Գնում եմ՝ ընտանիք կազմելու: Մեկ է՝ ինձ հետ եմ տարել հուշերը»: Աննայի ասելով՝ ողջ կյանքում ոչնչով չես կարողանում լրացնել ծնողական սերը, սակայն մի բան հասատ է. ինչ էլ լինի, ոչ մի դեպքում, Աննան կյանքում իր երեխային չի հանձնի մանկասուն:

ՄԱԲԻԼ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆ

Երբ հայրիկն ու մայրիկը աշխատում են

Քաղաքակիրթ աշխարհում, որին հայերս շաս ենք սիրում անդրադառնալ ամենատարբեր պատճառներով, վաղուց արդեն ընդունված ձեւ է, որ ցերեկային (նույնիսկ հաճախ գիշերները) ժամերին, երբ ծնողներն աշխատում են, երեխաներին հետեւում են դայակները: Այդ դայակներին ծնողները «գտնում» են հատուկ կազմակերպություններից, ընկերություններից, որոնք մեծ պահանջարկ ունեն Արեւմուտքում, հիմա արդեն նաեւ Ռուսաստանում: Այդ ընկերություններից մարդիկ «ձեռք են բերում» նաեւ մեծահասակներին հետեւողներ, տնային կենդանիներին հետեւողներ, առհասարակ, տանտերերի բացակայության ժամանակ, տանը հետեւողներ: Սակայն, չգիտես ինչու, բիզնեսի (ընդ որում՝ բավական եկամտաբեր բիզնեսի) այս ձեւը տարածված չէ Հայաստանում: Եթե հաշվի առնենք, որ հայկական աշխատաշուկայի զգալի մասն արդեն «գրավվել է» կանանց կողմից, ապա ակնհայտ է դառնում, որ մեր երկրում կան բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ, որոնք իրենց երեխաներին ցերեկվա ժամերին հետեւողի կարիք ունեն:

Երեւանցիներ **Էդվարդն** ու **Լուսինեն** հենց այդպիսի ընտանիք են: Երկուսի ծնողներն էլ նույնպես աշխատում են, եւ 3-ամյա աղջիկը հաճախ «շրջագայում» է տատիկների աշխատատեղերով: «Անպայման ուզում ենք դայակ վարձել, սակայն չգիտենք, թե ում է պետք դիմել,- **«Ազգ»**-ին ասաց Լուսինեն,- ոչ մի ծանոթ-բարեկամ չունենք, որ կարողանա երեխային հետեւել ամեն օր, սիրված տատիկի հետ ամեն օր անց է կացնում գրադարանում»:

Մենք նույնպես փորձեցինք գտնե մայրաքաղաքում գտնել նման մի կազմակերպություն, սակայն ապարդյուն. այդպիսիք պարզապես չկան: Իսկ պատահական դայակների ով լինելը խիստ կասկածների տեղիք է տալիս: Կարծում եմ, ոչ մեկս չի ցանկանա, որ մեր երեխային հետեւի, ասենք մաշկային հիվանդություններ ունեցող մեկը, էլ չխոսենք տարբեր աղանդների ներկայացուցիչների մասին, որոնք, ի դեպ, բավական «հմտացել» են այս ուղղությամբ:

«Ազգ»-ի հետ զրույցում երեւանցի **Սոնան** պատմեց, որ ծանոթներից մեկի խորհրդով դայակ է վարձել իր երեխայի համար. «Հետո երեխաս, որը 9 տարեկան է, կրոնական, գունագեղ գրքեր էր կարդում, աղոթքներ էր անում, անընդհատ խոսում էր դայակից, նրա հետ ունեցած զրույցներից, խոսում էր նույնիսկ աշխարհի վերջից: Ես սկսեցի ավելի շաս հետեւել այդ ամենին ու պարզեցի, որ դայակը Եհովայի վկա է եւ պարզապես քարոզչություն էր տանում երեխայիս հետ: Անմիջապես հրաժարվեցի նրա ծառայություններից»:

Այս իրավիճակը արտասահմանում պատկերացնել գրեթե անհնար է, որովհետեւ այնտեղ ծնողները դայակ վարձելիս մանրամասն տվյալ կազմակերպությունից ծանոթանում են վերջինիս կենսագրությանը, բնավորությանը: Եվ այս ամենը պատահական չէ, չէ՞ որ ծնողները իրենց երեխայի նաեւ դաստիարակությունն են հանձնում տվյալ մարդուն: Իսկ վերոհիշյալ կազմակերպությունները, օրինակ՝ Ռուսաստանում, երբեք կասկածելի վարքով, կամ «շեղումներ» ունեցող, հիվանդ մարդկանց չեն ընդգրկում իրենց ցանկերում. դա կազմակերպության վարկանիշի հարցն է արդեն, քանի որ դայակ «գործուղելիս» տվյալ կազմակերպությունն է պատասխանատվություն կրում:

Իսկ մեր երկրում, բնականաբար, ամեն ինչ ուրիշ է: Իհարկե, շաս երիտասարդ ընտանիքներ իրենց երեխաների խնամքը վստահում են տատիկ-պապիկներին կամ բարեկամ-ծանոթ-հարեւաններից մեկին, սակայն քիչ չեն նաեւ այնպիսիք, որ պարզապես «մարդ» չունեն երեխային հետեւելու եւ չգիտեն էլ, թե ում դիմեն այդ հարցով:

Տարօրինակ է, որ եկամտաբեր բիզնեսի այս ձեւը դեռ չի «համտեսվել» մեր երկրում: «Ըստ իս, դրա պատճառն այն է, որ մեր երկրում շաս ընտանիքներում առնվազն մեկը չի աշխատում, հետեւաբար երեխայի մոտ մնացող կա», մեր զրույցում նկատեց հոգեբան Գայանեն: Նա, սակայն, ընդունեց, որ նման խնդիր կա Հայաստանում, ու կարծիք հայտնեց, թե այդ դեպքում լավ կլինի, որ ծնողները դիմեն հենց հոգեբաններին (մանավանդ որ Հայաստանում սկսել են շատանալ այդ մասնագիտությունն ունեցողները-Հ. Ա.): Սակայն ի՞նչն է խանգարում հենց նույն հոգեբաններին ինչ-որ կազմակերպություն ստեղծելու համար, որը հենց մասնագետներ, շեշտում ենք՝ մասնագետներ կտա՝ երեխաներին դաստիարակելու, նրանց խնամելու համար:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ

Մեքենաների պարտադիր ապահովագրում՝ ինչպե՞ս եւ որքա՞ն

Հայաստանում, պատշոնական վիճակագրության համաձայն, գրանցված է մոտ 400 հազար տրանսպորտային միջոց, որոնք 2011-ի հունվարի 1-ից պետք է պարտադիր ապահովագրվեն: Ազգային Ժողովն արդեն ընդունել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքը, սակայն դեռ շատերի համար պարզ չէ, թե ի՞նչ է այն եւ ինչպե՞ս է կատարվելու:

ՄԱԿ-ի տվյալներով՝ աշխարհում տարեկան ավտովթարների զոհ է դառնում 300 հազար մարդ, եւս 7,5 միլիոնը ստանում են մարմնական վնասվածքներ: Ապահովագրությունն այն միջոցներից մեկն է, որը կարգավորում է ավտոմեքենաների սեփականատերերի ու վթարից տուժածների միջեւ առաջացող ֆինանսական խնդիրները: Տրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը աշխարհում սկսել է գործել դեռ մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը: Համաշխարհային պատերազմի ավարտից հետո ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական խորհուրդը մշակեց հանձնարարականներ պարտադիր ավտոապահովագրման կանոնները միասնականացնելու առումով: Այն հետագայում պայմանագրի տեսք ստացավ՝ ուժի մեջ մտնելով 1953-ին եւ հայտնի է Green Card անվամբ: Համաձայն այդ պայմանագրի, ավտոտրանսպորտի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրական պոլիսները, տրված համաձայնագրին միացած երկրում, գործում են համաձայնագրի անդամ մյուս երկրներում՝ Եվրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի 45 երկրներում:

Այժմ դառնանք Հայաստանին: Մեր երկիրը չի դասվում պատահարների չափազանց բարձր տեսակարար կշիռ ունեցող երկրների թվին, չնայած մեր ճանապարհները հայտնի են վտանգավորության բարձր աստիճանով, իսկ վարորդներն ու հետիոտները՝ երթեւեկության կանոնների զանգվածային խախտմամբ: Փորձագետների մի մասն այն կարծիքին է, որ օրենքի նախագիծն ընդունելուց հետո գրանցված պատահարների թիվը կտրուկ կավելանա, իսկ կլինի նույնիսկ ճանապարհային ոստիկանության թվաքանակն ավելացնել:

Դարձյալ պատշոնական վիճակագրության տվյալներով՝ Հայաստանում ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը տարեկան մոտ 3000 է: «Ամիլլես» ավտովարորդների իրավունքների պատշոնության կենտրոնի նախագահ Էդուարդ Հովհաննիսյանի կարծիքով, **պատահարների իրական թվերն ավելի մեծ են: «Ոստիկանության տվյալներով՝ ներկայումս հաշվառվում է յուրաքանչյուր 7-րդ ավտոպատահարը: Այս օրինագիծը կկարգավորի նաեւ այս ոլորտը, որովհետեւ արդեն վարորդներն իրենք շահագրգռված կլինեն, որ հաշվառվի ավտոպատահարը», նշում է Էդուարդ Հովհաննիսյանը եւ ավելացնում. «Այժմ ավտոտրանսպորտային պատահարների հետեւանքով, երբ վնասվում է երրորդ անձը, նրա բուժման ծախսերը հոգում է կամ պետությունը, երբեմն նաեւ տուժողը, կամ էլ հենց մեղավորը: Այս օրենքով այդ ծախսերը հոգալու են ապահովագրական ընկերությունները եւ մեղավորը»:**

Հայաստանում ներդրվող քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրման օրենքի համաձայն, ավտոմեքենաների տերերը պարտադիր մուծումներ են կատարելու ապահովագրական ընկերություններին, որոնք նախատեսված են պատահարների դեպքում երրորդ անձանց վնասները փոխհատուցելու համար: Սակայն օրենքում հստակ սահմանված չէ, թե ավտոմեքենաների սեփականատերերը որքան գումար պետք է վճարեն: Ըստ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանի, խոսքը տարեկան 30-38 հազար դրամի մասին է, որն ամսական կազմում է մոտ 3000 դրամ: Առանց ապահովագրման մեքենան վարելու դեպքում վարորդը կենթարկվի 50 հազար դրամ պետական տուգանքի: Կախված այն հանգամանքից, թե վարորդը ապահովագրման որ մակարդակն է ընտրել, կորոշվեն փոխհատուցման չափերը:

Օրենքը նախատեսում է այսպես կոչված «Բոնուս-Մալուսների համակարգ», ըստ որի, պարտաճանաչ վարորդներն ավելի քիչ կվճարեն, իսկ անպարտաճանաչները՝ շատ: Հնարավոր է, որ անպարտաճանաչ վարորդների վճարած գումարը հասնի մինչեւ մեքենայի արժեքի 25 տոկոսի: Այսինքն, ապահովագրական ընկերությունները պետք է ճիշտ գնահատեն ռիսկերը: Ապահովագրական պայմանագրերը մեքենաների սեփականատերերը ընկերությունների հետ կնքում են առավելագույնը 1 տարով, որպեսզի ապահովագրական ընկերությունները հնարավորություն ունենան վերահաշվարկելու հնարավոր ռիսկերը:

Նախատեսվում է ստեղծել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնողների բյուրո: Այս կառույցի նպատակն է լինելու տուժած անձանց շահերի պաշտպանությունը եւ համակարգի կայունությունն ու զարգացումն ապահովելը: Բյուրոն ունենալու է իրավաբանական անձի կարգավիճակ եւ գործունեություն ծավալելու է միայն Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո: Ստեղծելու է երաշխավորման ֆոնդ, որի միջոցներով բյուրոն կկատարի ապահովագրական հատկացումները:

Համաձայն օրենքի, ավտոտրանսպորտային պատահարների դեպքում տուժած քաղաքացիները պետք է ստանան 1,5 մլն դրամ՝ գույքային վնասի դեպքում, 3 մլն դրամ՝ անձնական վնասի դեպքում (առողջության կորուստ կամ մահ) ըստ յուրաքանչյուր տուժողի եւ 9 մլն դրամ՝ ըստ յուրաքանչյուր պատահարի: Համեմատության համար ներկայացնենք մի շարք այլ երկրներում գործող փոխհատուցումների չափերը: Բուլղարիայում փոխհատուցումները կազմում են համապատասխանաբար՝ 100 հազ. եվրո եւ 350 հազ. եվրո, Էստոնիայում՝ 1 մլն եվրո եւ 5 մլն եվրո, Բելառուսում՝ 30 հազ եվրո ե՛ւ գույքային, ե՛ւ անձնական վնասի դեպքում:

Քաղաքացիները փոխհատուցման կարող են հավակնել, եթե պատահարի մեղավորն իրենք չեն: Եթե, օրինակ, քաղաքացին փողոցն անցել է ոչ սահմանված տեղում եւ ենթարկվել վրաերթի, փոխհատուցում չի ստանա: Սակայն այստեղ կա մի հանգամանք, որը կարծես թե օրենքը չի կարգավորում՝ հաճախ պատահարները տեղի են ունենում երկու կողմի մեղքով, եւ հետիոտնի վնասը համեմատելի չէ մեքենայի տիրոջ կամ մեքենայի վնասի հետ, որն անգամ կարող է չտուժել: Թերեւս ճիշտ կլինի մեխանիզմ նախատեսել, որ նման դեպքերում փոխհատուցում տրվի առավել տուժած կողմին: Մյուս կողմից էլ՝ երբեմն դժվար կլինի պարզել թե ով է մեղավոր, երբ խախտման պատճառը համապատասխան ճանապարհային նշանի կամ գծանշման բացակայությունն է լինում:

Մի խոսքով, օրենքն արդեն ընդունվել է, բայց ակնհայտ է, որ առաջին 1-2 տարում դեռ կարգավորման ենթակա շատ խնդիրներ կառաջանան, եւ օրենսդրական շտկումների կարիք հատատատորեն կզգացվի:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 18/06/2010 20:00 Page 1

Բանակցություններ, թե՞ «փուշ» դիվանագիտություն

1-ին էջից

2007-ից հետո բոլոր առաջարկները՝ աշխատանքային

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը թերեւս միակ համաժասախան մակարդակի պաշտոնյան է, որ որեւէ մեկնաբանություն ու հայտարարություն է արել հանդիպումից հետո: Հերթական անհեթեթ մեկնաբանությունները հնչել են նաեւ Բաքվի անունից, սակայն այս պարագայում, պարզվում է, հարեւանները նախընտրում են մանր չինովնիկների, ասենք՝ Ադրբեջանի ԱԳՆ խոսնակի հայտարարությունները, որոնցից, ի դեպ, ուզածդ պահին կարելի է հրաժարվել կամ «անցնել վրայով»: Հանդիպումների այս հարթակում խոսնակային մեկնաբանությունը միայն կարող է վկայել, որ Բաքվում արտահայտվելու խնդիրներ են ծագել, հատկապես որ վերջին ժամանակաշրջանում Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի ձայնը չի լսվում:

Ամեն դեպքում, ըստ ՀՀ ԱԳՆ տեղեկացման, Նալբանդյանը մասնավորապես նշել է, որ Ռուսաստանը, որպես Մինսկի խմբի համանախագահ երկիր, կարեւոր դեր է խաղում Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացում:

«Նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնությամբ եւ ներկայությամբ արդեն վեցերորդ հանդիպումն է կայանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ: Նախորդ հանդիպումներն ու բանակցությունները անց են կացվել Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Քիշնեւում եւ Սոչիում: Մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել նաեւ եռանախագահների նախաձեռնությամբ», ասել է Նալբանդյանը:

Վերջին ամիսների ընթացքում, ըստ Նալբանդյանի, կողմերի միջեւ շփումներն ընթանում էին նախարարների մակարդակով՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի միջնորդությամբ, որոնք լիովին աջակցվում էին մյուս համանախագահների՝ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի կողմից: «Նախագահ Մեդվեդեւի ներգրավվածությամբ հանդիպումները հնարավորություն են ընձեռում մերձեցնելու կողմերի դիրքորոշումները, իսկ այն հարցերում, որոնց շուրջը պայմանավորվածություններ ձեռք չեն բերվում, կողմերը կարողանում են առավել հստակեցնել մոտեցումները, ինչը հնարավորություն է տալիս շարունակել բանակցությունները եւ շարժվել առաջ», պարզաբանել է ԱԳ նախարարը:

Նալբանդյանը հունիսի 17-ի եռակողմ հանդիպումը գնահատել է որպես ֆնարկում կառուցողական մթնոլորտում, արձանագրմամբ, թե ինչի են հասել առ այսօր հանդիպումների արդյունքում եւ պայմանավորվածությամբ՝ շարունակելու բանակցությունները հենց դրա հիման վրա: Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը նաեւ տեղեկացրել էր, որ նույն օրը՝ հունիսի 17-ին հանդիպելու են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ Ադրբեջանի նախագահը, իսկ երեկ՝ համանախագահները հանդիպել են նաեւ Հայաստանի նախագահի հետ:

Պատասխանելով մադրիդյան առաջարկությունների մասին հարցին՝ Հայաստանի արտգործնախարարն ասել է, որ 2007 թ. նոյեմբերից բանակցությունների սեղանին եղել է մեկ փաստաթուղթ՝ համանախագահների առաջարկած մադրիդյան սկզբունքները, որոնք նաեւ գրանցված են Վիեննայում՝ ԵԱՀԿ քարտուղարության մակարդակով որպես պատշաճ առաջարկություն: Դրանից հետո բոլոր առաջարկները կրել են աշխատանքային բնույթ:

Ամփոփելով եռակողմ հանդիպումը՝ Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարն ասել է. «Գործընթացը Մինսկի խմբի եռանախագահներ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի աջակցությամբ շարունակվում է: Կարծում եմ, որ այս հանդիպումը օգտակար էր: Այն կարեւոր հանգրվան էր ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացում»:

Եռակողմ հանդիպմանը նմանօրինակ գնահատական է տրվել նաեւ Ռուսաստանի նախագահի աշխատակազմից: Ըստ Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Նատալյա Տիմակովայի, գրանցվել է կողմերի՝ ղարաբաղյան հակամարտության գործընթացում ունեցած դիրքորոշումների մերձեցում: «ՌԻԱ Նովոստի»-ի տեղեկացմամբ, Տիմակովան նշել է, որ եռակողմ հանդիպմանը ֆնարկվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցային խնդիրներ: Նա նաեւ նշել է, որ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները հաստատել են իրենց պատրաստակամությունը՝ շարունակելու երկխոսությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի միջնորդությամբ:

Համանախագահները հուլիսին կգան տարածաշրջան

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հունիսի 17-ի ուշ երեկոյան Սանկտ Պետերբուրգում, Ռուսաստան-Հայաստան-Ադրբեջան նախագահների եռակողմ հանդիպումից հետո, հանդիպել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադֆեի (ԱՄՆ), Բերնար Ֆասիեի (Ֆրանսիա), Իգոր Պոպովի (Ռուսաստան) եւ ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ: Հանդիպման ընթացքում, ադրբեջանական լրատվամիջոցների փոխանցմամբ, կողմերը ֆնարկել են ղարաբաղյան հակամարտության ներկայիս փուլը եւ բանակցությունների հեռանկարները:

Երեկ միջնորդական առաքելություն իրականացնող Մինսկի խմբի համանախագահների եւ ԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ հանդիպել է նաեւ Հայաստանի նախագահը: Ի դեպ, համանախագահները, ամենայն հավանականությամբ այս հանդիպման արդյունքներն ամփոփելով ու թերեւս նոր ակնկալիքներով կամ առաջարկներով տարածաշրջան կայցելեն հուլիսի սկզբին: Այցելության ժամկետի մասին Սանկտ-Պետերբուրգում տեղեկացրել է Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավար Էդվարդ Նալբանդյանը:

Սերժ Սարգսյանը Ռուսաստան է մեկնել հունիսի 17-ին ԴԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրավերով՝ մասնակցելու Սանկտ Պետերբուրգի ամենամյա միջազգային տնտեսական համաժողովի: Այսօր Հայաստանի նախագահը կմասնակցի հայ համայնքի կազմակերպած հոբելյանական տոնական միջոցառումներին. Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը նշում է այստեղ հայերի հաստատման 300-ամյակը: Սերժ Սարգսյանը ելույթ կունենա Տավրիկյան պալատում կայանալիք պաշտոնական ընդունելությանը:

Սարգսյանը մնաց, Ալիեւը մեկնեց

Սանկտ Պետերբուրգ կատարած աշխատանքային այցի երկրորդ օրը՝ հունիսի 18-ին Հայաստանի նախագահը մասնակցել է միջազգային տնտեսական ֆորումի աշխատանքներին: «Պանորամա» կայքէջի տեղեկացմամբ, Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել ֆորումի հանդիսավոր բացմանը, մասնակցել «Համաշխարհային տնտեսություն. Վերականգնում եւ կառավարում» խորագրով լիագումար նիստին: Ֆորումի ընթացքում ֆնարկվում են տարբեր հարցեր, առանցքային հարցերից մեկն է էներգետիկ անվտանգությունը, որն այս տարի էլ չի շրջանցվել:

Ֆորումն անցկացվում է 14-րդ անգամ, այն գնալով ավելի ներկայացուցչական կազմ է հավաքում: Հայաստանը եւս միջոցառմանը մասնակցում է բավականին ներկայացուցչական կազմով, երկրի ղեկավարի գլխավորած պատվիրակության կազմում են փոխվարչապետը, էկոնոմիկայի, ֆինանսների, սփյուռքի նախարարներն ու այլ պաշտոնատար անձինք: Հայաստանի նախագահը երրորդ տարին անընդմեջ մասնակցում է այս ֆորումին:

Ադրբեջանի նախագահն արդեն հունիսի 17-ի ուշ երեկոյան Սանկտ Պետերբուրգում չէր, վերադարձել էր Բաքու: Այս հանգամանքն հետաքրքրական է, քանի որ մինչեւ Ռուսաստան մեկնելը Ադրբեջանի նախագահի մամլո ծառայությունը տեղեկացրել էր, թե Իլհամ Ալիեւը Պետերբուրգ է մեկնում Միջազգային տնտեսական ֆորումին մասնակցելու նպատակով, եւ դա շրջանակներում էլ հանդիպելու էր Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հետ: Սակայն եռակողմ եւ աղա համանախագահների հետ հանդիպումից հետո Ալիեւ կրստերը հեռացել է Սանկտ Պետերբուրգից՝ իր ներկայությամբ «չպատվելով» միջազգային տնտեսական ֆորումը:

Այս քայլը թերեւս բացատրելի է ալիեւյան վերջին հայտարարություններ ֆոնին, որոնց համաձայն Ադրբեջանի նախագահը, եւ ոչ միայն նա, շարունակաբար փորձում է աշխարհին ու նաեւ սեփական ժողովրդին համոզել, թե հայկական կողմն է ձգձգում գործընթացը ու չի ընդունում մադրիդյան սկզբունքները: Բաքվի հայտարարությունները, թե Հայաստանը երկար ձգում է, այսպես կոչված, նորացված մադրիդյան սկզբունքների առնչությամբ իր դիրքորոշումն արտահայտելու հարցը, գոնե Ալիեւի այս քայլի ֆոնին սնանկ են, այլապես ինչպես հասկանալ ամեն ինչում իբր հստակություն ունեցող Ադրբեջանի նախագահի շուտափույթ վերադարձը Բաքու: Ինչ էլ պատահած լինի, միանշանակ ասելի չէ, թեեւ կարելի է ենթադրել, որ սուլթանական նկրտումներ ունեցող Ալիեւ կրստերի համար Պետերբուրգում ամեն ինչ չէ, որ ընթացել է Ադրբեջանի նախագահի «ուզած ուղղությամբ»:

Ինչեւէ, եթե Պետերբուրգում Ալիեւը դժգոհ լինելու առիթ է ունեցել, ապա Բաքու վերադառնալուն պես թերեւս վերագտել է կորցրած տրամադրությունը: Բանն այն է, որ Ադրբեջանում Ալիեւի «հավերժ» նախագահության օրենսդրական արդեն իսկ առկա դաշտում Ադրբեջանի խորհրդարանը ընդունել է եւս մեկ փաստաթուղթ, որ վերաբերում է Սահմանադրական դատարանին: Ըստ այդ փոփոխությունների, Սահմանադրական դատարանի մասին օրենքի են մուտքագրվել Ադրբեջանի նախագահի լիազորությունների երկարացմանն առնչվող դրույթներ:

ՀԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մոսկվան դժգոհ է ԱՄՆ-ի միակողմանի հակահրանային պատժամիջոցներից

Ռուսաստանի ԱԳՆ-ն դժգոհություն է արտահայտել ԱՄՆ-ում հունիսի 17-ին Իրանի դեմ ուղղված միակողմանի պատժամիջոցների ընդունումից: ԴԴ ԱԳՆ կայքէջի պաշտոնական մեկնաբանության մեջ նշվում է, որ ռուսական կողմը Վաշինգտոնի ձեռնարկած միջոցները համարում է անընդունելի: «Դրանք ներհակ են Իրանի միջուկային ծրագրի հարցում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կարգավորման բանակցային գործընթացում»:

Եռակողմ հանդիպմանը նմանօրինակ գնահատական է տրվել նաեւ Ռուսաստանի նախագահի աշխատակազմից: Ըստ Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Նատալյա Տիմակովայի, գրանցվել է կողմերի՝ ղարաբաղյան հակամարտության գործընթացում ունեցած դիրքորոշումների մերձեցում: «ՌԻԱ Նովոստի»-ի տեղեկացմամբ, Տիմակովան նշել է, որ եռակողմ հանդիպմանը քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցային խնդիրներ: Նա նաեւ նշել է, որ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները հաստատել են իրենց պատրաստակամությունը՝ շարունակելու երկխոսությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի միջնորդությամբ:

Ադրբեջանի նախագահն արդեն հունիսի 17-ի ուշ երեկոյան Սանկտ Պետերբուրգում չէր, վերադարձել էր Բաքու: Այս հանգամանքն հետաքրքրական է, քանի որ մինչեւ Ռուսաստան մեկնելը Ադրբեջանի նախագահի մամլո ծառայությունը տեղեկացրել էր, թե Իլհամ Ալիեւը Պետերբուրգ է մեկնում Միջազգային տնտեսական ֆորումին մասնակցելու նպատակով, եւ դրա շրջանակներում էլ հանդիպելու էր Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հետ: Սակայն եռակողմ եւ աղա համանախագահների հետ հանդիպումից հետո Ալիեւ կրստերը հեռացել է Սանկտ Պետերբուրգից՝ իր ներկայությամբ «չպատվելով» միջազգային տնտեսական ֆորումը:

Այս քայլը թերեւս բացատրելի է ալիեւյան վերջին հայտարարություններ ֆոնին, որոնց համաձայն Ադրբեջանի նախագահը, եւ ոչ միայն նա, շարունակաբար փորձում է աշխարհին ու նաեւ սեփական ժողովրդին համոզել, թե հայկական կողմն է ձգձգում գործընթացը ու չի ընդունում մադրիդյան սկզբունքները: Բաքվի հայտարարությունները, թե Հայաստանը երկար ձգում է, այսպես կոչված, նորացված մադրիդյան սկզբունքների առնչությամբ իր դիրքորոշումն արտահայտելու հարցը, գոնե Ալիեւի այս քայլի ֆոնին սնանկ են, այլապես ինչպես հասկանալ ամեն ինչում իբր հստակություն ունեցող Ադրբեջանի նախագահի շուտափույթ վերադարձը Բաքու: Ինչ էլ պատահած լինի, միանշանակ ասելի չէ, թեեւ կարելի է ենթադրել, որ սուլթանական նկրտումներ ունեցող Ալիեւ կրստերի համար Պետերբուրգում ամեն ինչ չէ, որ ընթացել է Ադրբեջանի նախագահի «ուզած ուղղությամբ»:

Ինչեւէ, եթե Պետերբուրգում Ալիեւը դժգոհ լինելու առիթ է ունեցել, ապա Բաքու վերադառնալուն պես թերեւս վերագտել է կորցրած տրամադրությունը: Բանն այն է, որ Ադրբեջանում Ալիեւի «հավերժ» նախագահության օրենսդրական արդեն իսկ առկա դաշտում Ադրբեջանի խորհրդարանը ընդունել է եւս մեկ փաստաթուղթ, որ վերաբերում է Սահմանադրական դատարանին: Ըստ այդ փոփոխությունների, Սահմանադրական դատարանի մասին օրենքի են մուտքագրվել Ադրբեջանի նախագահի լիազորությունների երկարացմանն առնչվող դրույթներ:

Ռուսաստանի ԱԳՆ-ն դժգոհություն է արտահայտել ԱՄՆ-ում հունիսի 17-ին Իրանի դեմ ուղղված միակողմանի պատժամիջոցների ընդունումից: ԴԴ ԱԳՆ կայքէջի պաշտոնական մեկնաբանության մեջ նշվում է, որ ռուսական կողմը Վաշինգտոնի ձեռնարկած միջոցները համարում է անընդունելի: «Դրանք ներհակ են Իրանի միջուկային ծրագրի հարցում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կարգավորման բանակցային գործընթացում», մասնակցել «Համաշխարհային տնտեսություն. Վերականգնում եւ կառավարում» խորագրով լիագումար նիստին: Ֆորումի ընթացքում քննարկվում են տարբեր հարցեր, առանցքային հարցերից մեկն է էներգետիկ անվտանգությունը, որն այս տարի էլ չի շրջանցվել:

Ֆորումն անցկացվում է 14-րդ անգամ, այն գնալով ավելի ներկայացուցչական կազմ է հավաքում: Հայաստանը եւս միջոցառմանը մասնակցում է բավականին ներկայացուցչական կազմով, երկրի ղեկավարի գլխավորած պատվիրակության կազմում են փոխվարչապետը, էկոնոմիկայի, ֆինանսների, սփյուռքի նախարարներն ու այլ պաշտոնատար անձինք: Հայաստանի նախագահը երրորդ տարին անընդմեջ մասնակցում է այս ֆորումին:

Ադրբեջանի նախագահն արդեն հունիսի 17-ի ուշ երեկոյան Սանկտ Պետերբուրգում չէր, վերադարձել էր Բաքու: Այս հանգամանքն հետաքրքրական է, քանի որ մինչեւ Ռուսաստան մեկնելը Ադրբեջանի նախագահի մամլո ծառայությունը տեղեկացրել էր, թե Իլհամ Ալիեւը Պետերբուրգ է մեկնում Միջազգային տնտեսական ֆորումին մասնակցելու նպատակով, եւ դրա շրջանակներում էլ հանդիպելու էր Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հետ: Սակայն եռակողմ եւ աղա համանախագահների հետ հանդիպումից հետո Ալիեւ կրստերը հեռացել է Սանկտ Պետերբուրգից՝ իր ներկայությամբ «չպատվելով» միջազգային տնտեսական ֆորումը:

Այս քայլը թերեւս բացատրելի է ալիեւյան վերջին հայտարարություններ ֆոնին, որոնց համաձայն Ադրբեջանի նախագահը, եւ ոչ միայն նա, շարունակաբար փորձում է աշխարհին ու նաեւ սեփական ժողովրդին համոզել, թե հայկական կողմն է ձգձգում գործընթացը ու չի ընդունում մադրիդյան սկզբունքները: Բաքվի հայտարարությունները, թե Հայաստանը երկար ձգում է, այսպես կոչված, նորացված մադրիդյան սկզբունքների առնչությամբ իր դիրքորոշումն արտահայտելու հարցը, գոնե Ալիեւի այս քայլի ֆոնին սնանկ են, այլապես ինչպես հասկանալ ամեն ինչում իբր հստակություն ունեցող Ադրբեջանի նախագահի շուտափույթ վերադարձը Բաքու: Ինչ էլ պատահած լինի, միանշանակ ասելի չէ, թեեւ կարելի է ենթադրել, որ սուլթանական նկրտումներ ունեցող Ալիեւ կրստերի համար Պետերբուրգում ամեն ինչ չէ, որ ընթացել է Ադրբեջանի նախագահի «ուզած ուղղությամբ»:

Ինչեւէ, եթե Պետերբուրգում Ալիեւը դժգոհ լինելու առիթ է ունեցել, ապա Բաքու վերադառնալուն պես թերեւս վերագտել է կորցրած տրամադրությունը: Բանն այն է, որ Ադրբեջանում Ալիեւի «հավերժ» նախագահության օրենսդրական արդեն իսկ առկա դաշտում Ադրբեջանի խորհրդարանը ընդունել է եւս մեկ փաստաթուղթ, որ վերաբերում է Սահմանադրական դատարանին: Ըստ այդ փոփոխությունների, Սահմանադրական դատարանի մասին օրենքի են մուտքագրվել Ադրբեջանի նախագահի լիազորությունների երկարացմանն առնչվող դրույթներ:

Լոնդոնի զգալի մասը Քաթարի սեփականությունն է

Մեծ Բրիտանիայում հասունանում է սկանդալ, որին մասնակից են իշխան Չառլզը եւ Քաթարի էմիրը: Պարզվում է, որ Պարսից ծոցի փոքրիկ էմիրությունը, որը վերջերս Մոհամմեդ ալ Ֆայեդից գնեց լոնդոնյան նշանավոր Harrods հանրախանութը, արդեն Լոնդոնի մի զգալի մասի սեփականատերն է:

Բրիտանական նախկին գաղութին՝ նավթառաս ու գազառաս Քաթարին պատկանում են Լոնդոնում ԱՄՆ դեսպանատան նախկին շենքը, Կեմդենի շուկան, Կեներ-ուորֆ գործարար շրջանը, Sainsbury հանրախանութների ցանցը եւ այլ բաներ: BBC-ն նշում է, որ Քաթարի անունից Եվրոպայում գործում է մի քանի կազմակերպություն՝ Qatar Jolding, Qatar Diar, Barwa.

Քաթարցիներին հետաքրքրում են պատմություն ունեցող ակտիվները, մշակութային անշարժ կայքը: Հարուստներն արձակուրդն անցկացնում են Մեծ Բրիտանիայում, իրենց զավակներին ուղարկում բրիտանական համալսարաններում ուսանելու:

Անցյալ տարի Քաթարի էմիր Համադ բեն Խալիֆա ալ Թանին հայտարարեց. «Ներկայիս ճգնաժամի պայմաններում շատ երկրներ նախընտրում են փողերը պահել եւ ոչ թե ներդնել արտերկրի ձեռնարկություններում: Իսկ մեզ համար սա եզակի հնարավորություն է, որպիսին առաջիկա 20 տարում դժվար թե կրկնվի»:

Միայն վերջին տարիներին, օգտվելով ֆինանսական ճգնաժամից եւ բրիտանական ֆունտի ցածր փոխարժեքից, Քաթարը Լոնդոնում ներդրել է ավելի քան 10 մլրդ ֆունտ ստեռլինգ, ընդգծում է BBC-ն:

Այդ փաստը թերեւս գաղտնի մնար, եթե օրերս չպարզվեր, որ անցուդարձին վաղուց տեղյակ է գահաժառանգ իշխան Չառլզը, որը ժամանակին Քաթարի վարչապետին հղած մի նամակում խնդրել էր, որ Qatar Diar կազմակերպությունը «սերունդների համար պահպանի Լոնդոնի եզակի նկարագիրը»:

Բանն այն է, որ Qatar Diar-ը Լոնդոնում՝ Չելսիի շրջանում ձեռք էր բերել հողատարածք եւ այնտեղ արդիական բնակելի համալիր կառուցելու պատվեր էր տվել Մոնակոյի ընկերություններից մեկին: Իսկ իշխան Չառլզը առհասարակ դեմ է ճարտարապետների «մոդեռնիստական գիտափորձերին», որոնք «հակասում են մարդու ոգեղենությանը եւ բնությանը»: Ի վերջո Քաթարը այդ շինարարության նախագիծը չեղյալ էր հայտարարել «ֆինանսական պատճառներով»:

Այսօր հենց միայն Լոնդոնում քաթարյան փողերի հետքերը կարելի է նկատել բառացիորեն ամենուրեք, շարունակում է BBC-ն: Մոհամմեդ ալ Ֆայեդից 1,5 մլրդ ֆունտով ձեռք բերած Harrods-ից եւ Չելսիի հիշյալ չարաբաստիկ հողատարածքից բացի, Qatar Diar-ը Լոնդոնում մի ամբողջ շարք նշանավոր շենքերի սեփականատերն է:

Ավելին, 2012-ին ընկերությունը պետք է ավարտի «Ադակու բեկոր» երկնաքերի շինարարությունը ըստ ճարտարապետ Ռենցո Պիանոյի նախագծի: 310 մետրանոց այդ սրածայր երկնաքերը կդառնա Արեւմտյան Եվրոպայի ամենաբարձր շինությունը:

Անձամբ Քաթարի վարչապետը վերջերս 100 մլն ֆունտով խոշոր առանձնատուն է ձեռք բերել իրենց Հայդ պարկի մոտ: Քաթարցիները Լոնդոնում ունեն նաեւ հյուրանոցներ, բաժնետոմսեր Chelsfield ընկերությունում, Barclay՛s բանկում եւ այլն:

Վերլուծաբանները կանխատեսում են, որ քաթարցի միլիարդատերերն արդեն եկող տարի աշխարհի խոշորագույն ներդնողները կդառնան արտերկրի անշարժ կայքի մեջ, իսկ լոնդոնյան շուկայում առաջ կանցնեն ռուսներից, որոնք դեռ վերջերս Լոնդոնի «էլիտար» տների առաջին գնորդներն էին:

AZG NEW PDF.qxd 18/06/2010 19:59 Page 1

Վիլյամ Սարոյանի հայերեն նոր ժողովածուն

«Ձեռնամարs ի սեր Հայաստանի»

Վիլյամ Սարոյանի 100-ամյակի հոբելյանական տարում գրողի ստեղծագործական ժառանգության հայերեն թարգմանությունները հարստացան մի քանի նոր գրքերով, ի թիվս դրանց՝ «Մարդկության տունը» ժողովածուով: Մանկության եւ պատանեկության տարիները, դպրոցական կյանքն արտացոլող սարոյանական այս պատվածքների հրատարակումն իր տեսակի մեջ նախադեպը չուներ այն առումով, որ այն մտահղացվեց եւ իրականացավ դպրոցական միջավայրում. թարգմանության, խմբագրման իրավունքը պատկանում է Երեւանի Ն. Գոգոլի անվան թիվ 35 դպրոցին: Ժողովածուն կազմել եւ ծանոթագրել է դպրոցի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու **Ասատուր Սարյանը**:

Վ. Սարոյանի այս նոր ժողովածուն լավ ընդունելություն գտավ ինչպես հանրակրթական դպրոցական, այնպես էլ՝ ընթերցողական լայն շրջանակներում, ավելին՝ հրատարակված գրականության շուրջը հիմնականում լռություն կամ անտարբերություն պահպանող մամուլը լայնորեն արձագանքեց այս ժողովածուին: Նման հաջողությունից ոգեւորված, Ասատուր Սարյանը մտահղացավ հրատարակության պատրաստել գրողի մեկ այլ ժողովածու, որը թեմատիկ առումով կլիներ նախորդի շարունակությունը եւ ինչ-որ ձեւով կամբողջացներ Սարոյանի մանկապատանեկան թեմայով գործերի հայերեն թարգմանությունը: Նոր ժողովածուի, որի կազմողը, թարգմանողն ու ծանոթագրողը նույնպես Ա. Սարյանն է, բոլոր գործերը, բացառությամբ երկուսի («Լորի» եւ «Պարոն Ֆլեմինգը եւ աբխարհի յոթ հրաբալիները») հայերեն ներկայացվում են առաջին թարգմանությամբ: Ժողովածուն՝ խորագրված **«Ձեռնամարs ի սեր Հայաստանի»** (320 էջ, ԵՊՀ հրատ.) ներառում է պատմվածքներ, մեկ վիպակ եւ հատվածներ գրքից, զետեղված ժամանակագրական սկզբունքով, բացառությամբ «Հեռեւիր ինձ» վիպակի, որը չնայած Սարոյանի առաջին գործերից է, բայց լույս է տեսել գրողի 100-ամյակի օրերին:



«Ձեռնամարs ի սեր Հայաստանի» ժողովածուն բացվում է ինքնակենսագրական հենքով «Հեռեւիր ինձ» ստեղծագործությամբ: Արամը՝ վիպակի պատանի հերոսը, ինքնաորոնման եւ կայացման ճանապարհին, թողնում է ընտանիքը՝ մորը եւ քրոջը, հեռանում ծննդավայրից՝ ամերիկյան փոքրիկ մի քաղաք եւ փորձում իր համար բացահայտել կյանքի գաղտնիքները, սեփական փորձառությամբ «վերամարմնավորել» այդ կյանքը գրականության մեջ: Ճանաչողության իր առաջին որոնումներում պատանին խուսափում է ազգային պատկանելությունից, գործակալության տնօրենի պարտադիր հարցը բավարարելուց հետո մտածում, թե *«Լավ կլիներ հեռանալ քաղաքից: Այստեղ նա միշտ հայ կլինի, դրանից ազատում չունի: Բայց դրսի աբխարհում ոչ ոքի չի հետաքրքրի, թե ինքը ով է, ոչ ոք չի համարձակվի նայել իրեն որպես օտարի»*:

... Մարդը՝ կյանքի մեծ ճանապարհին. սկիզբ ու անորոշություն, հարցեր՝ Անհայտությանը: Մենակությունը՝ ամեն գոյության... Ձախողում-դառնություն ու հիասթափություն, անդունդը երազի ու իրականության միջեւ: «Աբխարհն ավելի ուժեղ է, քան ես. ահա եւ ամենը». Սարոյանական աբխարհընկալումը, սակայն, լավատեսական, սեփական կամքի ու համառության վստահության մեջ է, որն էլ նրան հուսալքության չի տանում. իրական կյանքը շոշափելու, սեփական «մերկ ձեռքերի» փորձը ինքնավստահություն է ձեւավորում: *«Բայց ես նրանց ցույց կտամ: Ես ցո՛ւյց կտամ այս անիծված աբխարհին»: «Ես կլուծեմ հորս վրեժը»...*

«Ազգի» մշակութային հավելվածի այս տարվա մարտի 27-ի համարում Լուսինե Ֆերեճեթյանը, անդրադառնալով 2009-ին Ֆրեզնոյում առաջին անգամ տպագրված «Երիտասարդ Սարոյանը» ժողովածուին, որի մեջ նաեւ վերոհիշյալ վիպակն է ընդգրկված, ցանկություն էր հայտնել դրա հայերեն թարգմանության, որն ինչպես տեսնում ենք, արդեն կար: Թերեւս գրքի սահմանափակ տպաքանակի կամ մեզանում լույս տեսնող գրքերի ամբողջական տեղեկատվության պակասի պատճառով շատերս այս մասին իրազեկված չենք:

Ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ հեղինակը վիպակը չի թվագրել, ըստ սարոյանագետ Տիգրան Գուլյումճյանի, այն պետք է գրված լիներ 1929-1930 թվականներին, որն առաջին անգամ հանրությանը ներկայացվել է լրագրային տարբերակով, «Ֆրեզնո Բի» լրագրում, 2008-ի մայիս-հունիսին, որից էլ կատարվել է հայերեն սույն թարգմանությունը:

Ժողովածուի մյուս պատվածքները՝ «Ձեռնամարs ի սեր Հայաստանի», «Կյանքի մի ակնթարթ», «Տպագրություն», «Սուրհանդակը», «Ձագ», «Մանկիկը» եւ այլն, մարդու՝ մեծ աբխարհում նրա գոյության իմաստի եւ դրա որոնումների սարոյանական կենսահաստատ փիլիսոփայությամբ ներծծված գործեր են, գրողի՝ մեծ զարմանքով առ գոյությունը առեղծվածն ու տիեզերական հավերժությունը: Այս առումով անչափ ուշագրավ ու արտակարգ գեղեցիկ է «Մանկիկ» ստեղծագործությունը, որում ներքին ազատագրման ճանապարհին Բառը գտնում է ազատության ոգին՝ լայնատարած ու առաձգական, որ սկսվում է մարդկային պարզ կեցությունից, աբխարհի նախնական ճանաչողությունից ու բարձրանում դեպի վեր՝ հոգեւին տարածքներ. այն ասես ճախրում է՝ թեւատարած ու բաց, ընդառաջ՝ բնությանն ու երկնային անհունին, զգում տիեզերական մեծ ընչառությունը, փորձում պատասխաններ գտնել ժամանակի, հավերժության մեջ մարդու դերի, նրա գոյության իմաստի:

Նա փորձում է թափանցել կյանքի գաղտնիքների մեջ. *«Ես ամուր կբռնեմ այս աբխարհամասը եւ կբացահայտեմ այս կյանքի երազանքը: Ես տակնուվրա կանեմ այս ամբողջ վայրը եւ կբացահայտեմ մահկանացու լինելու դայծառ սաղմը»:* Սարոյանի՝ մարդու հանդեպ անսահման բարությունն ու գորովը հասնում է աստվածային-քրիստոնեական բարեգութ սիրո բարձրակետին. *«Ես նրանց ասացի, որ իրենց ցույց կտամ մեջքերը նստած Աստծուն: Ես նրանց հիշել կտվորեցնեմ: Նրանց հետ կխոսեմ հայտնության լեզվով: Եթե նրանք խուլ են, ես նրանց լսողությամբ կօծեմ: Եթե կույր են, տեսողություն կշնորհեմ: Եթե հաշմանդամ են, կբժշկեմ... Բոլոր նրանց, ովքեր երկրի վրա կյանք ունեն, բայց եւ մահվան զորեղ սաղմն են կրում»:*

Սարոյանական հարցերը՝ կյանքի, շարժման, նյութի, ինքնության որոնումների մասին, տանում են նրան էութենականության խորքերը, նա բացահայտում է Աստծուն իր ներսում: *«Այդ ինչ ուժի շնորհիվ է ամեն առավոտ ծագում արեւը: Ո՞ւմ վիճակն է գիշերը տարածվում երկրի վրա: Ո՞ւմ լացն է լսվում կենդանու ձագի ողբի մեջ: Ճշմարտությունը մեր մե՞ջ է, Տե՜ր: Ո՞ւմ անարատությունն է մեզ բարձրացնում մինչեւ մարդը: Ո՞ւմ մեղքն է մեզ դրդում սայթաքել եւ խոր խրվել: Որտե՞ղ է, Տե՜ր, այս վայրը: Ե՞րբ է գալու ժամանակը, Տե՜ր»*: Նա փնտրում է նյութի գաղտնիքը, ինքնության պայծառացումը. *«Մենք գիտենք, թե ինչի է հավասար երկու անգամ երկուսը, բայց գրո՞ղը տանի, ինչ բան է ծիծաղը»*: Եվ, այդուհանդերձ, խոր ինքնազգացողությունը նրան հուշում է. *«Մեր շինվածքը հողանյութ չէ, եւ մենք այստեղ մահուր ու ամբողջական չենք եկել: Հազարավորների բազմությունն է աղրում մեր մեջ եւ ճամփորդում մեր արյան միջով»*:

Նա հասու է դառնում երեւույթները, իրերը տեսնելու հարաբերականությանը ժամանակի, տարածության՝ իրական, սովորական գոյից վերացարկված, այլ չափումների, այլ սահմանների ընդգրկումներով. *«Իմ արյան եւ մտքի շրջանառությունը կյանքի միջով ավելի սխանչելի է, քան քո մարմնի երկչոտ տեղաշարժը բնից դեպի մարգագետնի ծաղկաթերթերը: Եթե հնարավոր լիներ իմանալ, թե մեզնից ո՞վ է իրականում պատկանում Աստծուն, ես կարծում եմ, որ դա կլինեիր դու՝ երկրի վախվորած ուրի բաբախյունը»:*

«Որպեսզի իմ սենյակից դեպի քաղաքը քայլեմ, ինձ անհրաժեշտ է հավատալ Աստծուն եւ մարդուն: Դու (դաշտամուկը - Մ. Բ.) շարժվում ես տիեզերքի հավերժական շարժման շնորհիվ: Ես կարող եմ լսել Բեթհովենի ուրի մոլեգնությունը հզոր երաժշտության մեջ, բայց ո՞վ գիտի, թե ինչ երաժշտություն է ձեւավորում քո արագաշարժ էությունը: Իմ սովորական աչքը կարող է ճամփորդել եւ հայտնվել Սեզանի տիեզերքում, բայց ո՞վ գիտի, թե մանրադիտակային ինչ չափսեր են բացահայտվել ավազի հատիկի մեջ քո լռելյան հայացքի ներքո»:

Նա տեսնում է ամենը՝ Երկիրը, Աբխարհը, մարդը, խոտը, լեռները, աստղը, դաշտամուկը, քամու շնչառությունը խոտերի արանքում, սպերի գոյությունը՝ բոլորը մեկ միասնական ներդաշնության, անսահմանության մեջ, հավերժի պտույտում: *«Ապրելու կրակը բոլորի մեջ է...»: «Ով մեկ անգամ ապրել է ու երբեք չի մահացել: Ով փոքրոցային շան նման քնի մեջ սողացել է դեպի Աստծո ոտքերը եւ շնորհ հայցել: Օ՜, մանկի՛նս, հնարավոր է: Ով երբեք չի կարող մեռնել, քանի որ նրանք, ովքեր ապրում են, նրա մարմինն են»*: Սարոյանի «Մանկիկը» հոգեւոր սահնչացման սլացք է, սիրո իմաստավորում՝ կյանքի, երկրի ու տիեզերքի արարչագործ վեհության հանդեպ:

Բնագրային ընթերցման բացակայությունը, իհարկե, միշտ էլ դժվարացնում է որեւէ թարգմանություն մասնագիտորեն գնահատել: Կարեւորը՝ ոչ միայն բնագրային լեզվի, այլեւ ստեղծագործության ոգին ճիշտ ըմբռնելը, փոխանցել-թարգմանելն է: Սույն ժողովածուն հայերեն հնչում է գրագետ, կիրթ եւ սահուն՝ ամենաէականը սարոյանական շունչը, ոգին պահպանած: Շնորհակալ գործ է կատարված՝ մեծ գրողի ժառանգության հայերեն թարգմանությունները եւս մեկ ժողովածուով հարստացնելու այս փորձով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

Արդեն հայտնի են «Ոսկե ծիրանի» մրցութային ֆիլմերի եւ միջազգային ժյուրիների անունները

Այս տարի «Ոսկե ծիրան» 7-րդ միջազգային կինոփառատոնը, որը կայանալու է հուլիսի 11-18-ը, ներկայացնելու է 3 մրցութային ծրագիր՝ միջազգային խաղարկային ու վավերագրական, նաեւ հայկական համայնապատկեր ծրագրերը:

Երեկ ասուլիսի ժամանակ փառատոնի ծրագրերի տնօրեն Միխայել Ստամբոլցյանը տեղեկացրեց, որ այս տարի խաղարկային ֆիլմերի մրցույթում ընդգրկված է 13 ֆիլմ: Այս ծրագրի շրջանակներում հայ հասարակությունը նաեւ հնարավորություն կունենա դիտելու թուրք ռեժիսոր Ռեհա Էրդեմի «Կոսմոս» ֆիլմը: Ըստ Մ. Ստամբոլցյանի՝ «Կոսմոսը» ամբողջությամբ նկարահանվել է Կարսում:

Միջազգային վավերագրական ֆիլմերի մրցութային ծրագրում ընդգրկված են 14 ֆիլմ, իսկ հայկական համայնապատկերում՝ 17:

«Մեր հանդիսատեսի հետաքրքրությունը վավերագրական ֆիլմերի հանդեպ տարեցտարի ավելանում է, եւ այդ փաստն ինձ ուրախացնում է», նշեց ծրագրերի տնօրենը եւ տեղեկացրեց, որ վավերագրական ֆիլմերը ցուցադրվելու են Տիկնիկային թատրոնի փոքր դահլիճում: Ռեժիսոր Էդգար Բաղդասարյանի «Արտաքից Սիոն» ֆիլմը ընդգրկված է Ե՛ւ վավերագրական ֆիլմերի, Ե՛ւ հայկական համայնապատկեր մրցութային ծրագրերում: Վավերագրական ֆիլմերից հատկանշական է նաեւ Էրիկ Ֆրիդլերի «Աղետ» ֆիլմը (Գերմանիա), որը նվիրված է Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին:

«Վերջերս «Աղետը» ցուցադրվել է գերմանական մի հեռուստաընկերությամբ, պրեմիերայից հետո ֆիլմի շուրջը մեծ աղմուկ է բարձրացել: Երբ դիտում ես ֆիլմը, տպավորությունն այնպիսին է, թե հայ մարդ է նկարահանել, սակայն ստեղծագործական խմբի մեջ որեւէ հայ չի եղել», ասաց փառատոնի գեղարվեստական հարցերով տնօրեն Սուսաննա Հարությունյանը:

«Ոսկե ծիրանը» բացվելու է Անրի Վեռնոյի «Մայրիկ», փակվելու է Սերժ Ավետիսյանի «Շների կղզին» ֆիլմերով, բացման եւ փակման արարողությունները վարելու է Սերժ Ավետիսյանը: 3 մրցութային ծրագրերը կդասեն միջազգային 5 ժյուրիներ: Խաղարկային ֆիլմերի ժյուրիի նախագահն է կինոռեժիսոր, պրոդյուսեր Ֆրիդրիխոնը Իսլանդիայից, իսկ վավերագրական ֆիլմերի մրցույթինը՝ լրագրող եւ կինոքննադատ Լուչիանո Բարիզոնեն Իտալիայից: Հայկական համայնապատկեր ծրագրի ժյուրիի նախագահն է Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միության անդամ Արմեն Մեղվեդեւը: Մրցութային ֆիլմերը դասելու են նաեւ ՖԻՊՐԵՍՍԻ-ի՝ Կինոքննադատների միջազգային ֆեդերացիայի եւ էկումենիկ կամ եկեղեցիների անկախ ժյուրիները:

Մ. Ստամբոլցյանի խոսքով՝ «Ոսկե ծիրանը» հետաքրքրական մի ուղղվածություն ունի, որին փառատոնն աբխատում է հավատարիմ մնալ: «Մեր փառատոնում չեն լինում բլոկբաստերներ, ֆանտաստիկ ֆիլմեր: Մենք ավելի շատ ընտրում ենք ֆիլմեր, որոնք պատմում են հասարակ մարդկանց խնդիրների մասին», նշեց ծրագրերի տնօրենը:

«Ոսկե ծիրան»-ն անցկացվում է մշակույթի նախարարության աջակցությամբ, փառատոնի գլխավոր հովանավորն է «Վիվասել-ՄՏՍ» ընկերությունը:

Ասուլիսի վերջում Սուսաննա Հարությունյանը տեղեկացրեց, որ այս տարի հայկական համայնապատկերում ընդգրկված կարճամետրաժ ֆիլմերի համար Բրիտանական խորհուրդը հատուկ մրցանակ է սահմանել:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հունիսի 21-ին՝ երաժշտության տոն

ՀՀ մշակույթի նախարարությունը ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության հետ համատեղ 2007 թվականից, արդեն 4-րդ տարին, ավանդաբար հունիսի 21-ին անց է կացնում «Երաժշտության տոն» ակցիան՝ մայրաքաղաքում եւ մարզերում:

Ինչպես նշեց ՀՀ մշակույթի նախարար Համլիկ Պողոսյանը հրավիրված ասուլիսում՝ նախաձեռնությունը Ֆրանսիայի մշակույթի նախարարությանն է (1982 թ.), որը տարեցտարի առավել լայն տարածում գտնելով, այսօր արդեն բացօթյա կենդանի կատարումներով «Երաժշտության տոնի» գաղափարի շուրջն է համախմբում աբխարհի ավելի քան 110 երկրների պրոֆեսիոնալ եւ ոչ պրոֆեսիոնալ կատարողների: Եվ աբխարհի ավելի քան 350 քաղաքներում ամեն տարի հունիսի 21-ին նշում են «Երաժշտության տոնը»: Այդ միջոցառումների շարքը լավագույն առիթն է հանրության լայն շերտերին ընդգրկելու դրանցում: Այդ օրը մայրաքաղաքի կենտրոնական փողոցները, բացօթյա սրճարանների հարակից տարածքները ողողվում են բազմաժանր երաժշտական կատարումներով՝ դասական, երգչախմբային, ժողովրդական, ջազային, ռոք, էլեկտրոնային»:

Միջոցառումները կսկսվեն առավոտյան ժամը 11.30-ին եւ կշարունակվեն մինչեւ կեսգիշեր: Բացօթյա համերգներ կանցկացվեն «Անգլիական այգում» (ժ. 11:00-13:00), ՀՀ Ազգային ժողովի բակում (ժ. 18:00-ից), Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի այգում (ժ. 20:00-ից):

ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Սերժ Սմբատյանը տեղեկացրեց, որ Շառլ Ազնավուրի հրապարակում՝ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության ուժերով ժ. 21.00-ին կայանալու է ռոք համերգ, իսկ «Պողոսյան պարտեզներում» (Սիրահարների այգի) նույն ժամին ելույթ կունենան ֆրանսիայից ժամանած «Լավաբ» եւ «Օգը դը բարբաֆ» ֆրանսիական էթնոջազ խմբերը: Մշակութային հարաստեւ համագործակցության արդյունքն այն է, որ Հայաստանը յուրացրել է այս տոնը եւ արդեն չորս տարի է իրականացնում է: Այս տարի տոնին մասնակցելու համար Լիբանանից ժամանել է մեկ երաժշտական խումբ:

Բավականին հագեցած է լինելու նաեւ մարզային ծրագիրը: Հայաստանի 7 մարզերի շուրջ 24 քաղաքներում ու գյուղերում (Կայոց ձոր, Արագածոտն, Լոռի, Գեղարքունիք, Շիրակ, Արմավիր, Կոտայք) կայանալու են համերգներ տեղի ստեղծագործական ներուժի մասնակցությամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 18/06/2010 20:29 Page 1

ԱԶԳ **Մարզական**

Ֆրանսիան հայտնվեց անդունդի եզրին

Գերմանացիները կասկածի տակ դրեցին ուղեգրի հարցը

Մեխիկացիներից կրած պարտությունը Ֆրանսիայի հավաքականին անդունդի եզրին հասցրեց: Ավարտական տուրում ֆրանսիացիները խաղալու են խմբի մյուս հեսնադահ ՀԱՀ հավաքականի հետ: Ուրուգվայ-Մեխիկա խաղում մրցակիցներին հաջորդ փուլ դուրս գալու համար բավարարում է նույնիսկ ոչ-ոքին: Այնպես որ A խմբից պայքարը շարունակելու ֆրանսիացիների հնարավորությունները շատ չնչին են: Կա մի տարբերակ միայն. եթե ֆրանսիացիները խոշոր հաշվով (4-0) հաղթեն ՀԱՀ հավաքականին, իսկ ուրուգվայցիներն էլ 2 գնդակի տարբերությամբ զիջեն մեխիկացիներին: Բայց դա ֆիչ հավանական է: Այնպես որ Ռայմոն Դոմենեկի հեսագա ճակատագիրը կարելի է վճռված համարել:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ռայմոն Դոմենեկ (Ֆրանսիա) - Խոսքեր չունեմ ասելու: Բոլոր նրանք, ովքեր հավատում էին մեզ, խորը հիասթափություն ապրեցին: Մենք փորձում էինք լավ խաղ ցուցադրել, սակայն դա մեզ չէր հաջողվում: Նույնիսկ չգիտեմ, թե ինչ եմ ասելու ֆուտբոլիստներիս: Մենք պետք է փորձենք հաջորդ խաղում պաշտպանել մեր պատիվը, գեղեցիկ ֆուտբոլ ցուցադրել: Ցավոք, մեր հեսագա ճակատագիրը միայն մեր ձեռքերում չէ: Մնում է ապավինել հրաշքին:

Խավիեր Ագիրե (Մեխիկա) - Ֆրանսիացիներին հաղթելը մեզ համար շատ կարեւոր էր: Հաշվի առեք նաեւ, որ նրանք աշխարհի փոխչեմպիոններն են: Մենք գեղեցիկ եւ որակյալ խաղ ցուցադրեցինք, սակայն դեռեւս չենք աղաիովել հաջորդ փուլի ուղեգիրը, ուստի հաջողությունը տոնելը դեռ վաղ է:

Խաղի վերաբերյալ իր կարծիքն է արտահայտել նաեւ ֆրանսիացի էմե Ժակեն, որի գլխավորությամբ հավաքականը 1998-ին նվաճել էր աշխարհի չեմպիոնի տիտղոսը. «Մեխիկացիներն ավելի գրագետ էին գործում: Մեր հավաքականը չկարողացավ դրսեւորել այն, ինչին ընդունակ էր: Հիասթափված եմ հավաքականի խաղով: Կարծում էի, որ ագրեսիվ խաղ ցուցադրող հավաքական կունենանք, սակայն սխալվեցի»:

Երեկ աշխարհի առաջնությունում առաջինը մրցապարեզ դուրս եկան Գերմանիայի եւ Սերբիայի հավաքականները: D խմբի առաջատարներից մեկը՝ Գերմանիայի ընտրանին, որ առաջին խաղում 4-0 հաշվով ջախջախել էր ավստրալացիներին, հիանալի հնարավորություն էր ստացել առաջնության մասնակիցներից առաջինը 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճել:

Սակայն գերմանական հզոր մեքենան հանդիպեց սերբերի համառ դիմադրությանն ու ագրեսիվ խաղին: Գերմանացիների հարձակման առաջատար Միրոսլավ Կլոզեն փորձում էր գրավել մրցակցի դարպասն ու աշխարհի առաջնություններում խփած գոլերի քանակով (12) հավասարվել ֆուտբոլի արքա Պելեին: Սակայն նա ոչ միայն չկարողացավ գոլ խփել, այլեւ ծանր կացության մեջ դրեց իր թիմակիցներին՝ 37-րդ րոպեին երկրորդ դեղին քարտը ստանալով, թողնելով խաղադաշտը:

Սերբերից ընդամենը մեկ րոպե պահանջվեց թվային առավելությունն իրացնելու համար: Աչքի ընկավ Միլան Յովանովիչը:

Գերմանացիները դեռեւս առաջին խաղակեսի ավարտին կարող էին վերականգնել հավասարակշռությունը, սակայն Հեդիրայի հարվածից հետո գնդակը դիպավ ձողին: Իսկ 59-րդ րոպեին նրանք գերազանց հնարավորություն ունեին վերջապես հավասարեցնելու հաշիվը, սակայն Պոդոլսկին չիրացրեց 11 մ հարվածը: Հիանալի խաղաց սերբ դարպասապահ Վլադիմիր Ստոյկովիչը՝ հետ մղելով գնդակը:

Սերբերն էլ կարող էին կրկնապատկել հաշիվը, բայց Յովանովիչի հարվածից հետո գերմանացիներին օգնության եկավ դարպասածողը: Այսպիսով, հաղթելով 1-0 հաշվով, սերբերը զգալիորեն սրեցին մրցաշարային իրավիճակը D խմբում: Իսկ Գերմանիայի ընտրանին զգալիորեն դժվարացրեց հաջորդ փուլ դուրս գալու իր խնդիրը: Դրա համար հունիսի 23-ին գերմանացիները պետք է հաղթեն Գանայի ընտրանուն: Բացառված չէ, որ 3 հավաքականներ վաստակեն հավասար միավորներ ու հարկ լինի հաշվել գնդակների տարբերությունը:

Սլովենիայի հավաքականը չկարողացավ պահպանել հաղթական հաշիվն ԱՄՆ-ի ընտրանու հետ մրցախաղում: Առաջին խաղակեսում Բիրսան ու Լյուբիյանկիչը 2 անգամ գրավեցին ամերիկացիների դարպասը: Սակայն ամերիկացի ֆուտբոլիստները կամային հաստանիշներ դրսեւորելով, ընդմիջումից հետո կարողացան փրկել խաղը: Իրենց թիմակիցներին պարտությունից փրկեցին Լենոն Դոնովանն ու Մայքլ Բրեդլին՝ դառնալով մեկական գոլի հեղինակ:

Մրցաշարային աղյուսակներ

A խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուրուգվայ	2	1	1	0	3-0	4
2. Մեխիկա	2	1	1	0	3-1	4
3. Ֆրանսիա	2	0	1	1	0-2	1
4. ՀԱՀ	2	0	1	1	1-4	1

C խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1.Սլովենիա	2	1	1	0	3-5	4
2.ԱՄՆ	2	0	2	0	3-3	2
3.Անգլիա	1	0	1	0	1-1	1
4.Ալժիր	1	0	0	1	0-1	0

D խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Գերմանիա	2	1	0	1	4-1	3
2. Գանա	1	1	0	0	1-0	3
3. Սերբիա	2	1	0	1	1-1	3
4. Ավստրալիա	1	0	0	1	0-4	0

Սուարեսը մերժեց «Զենիթին»

Սանկտ Պետերբուրգի «Զենիթին» չհաջողվեց պայմանավորվել Ուրուգվայի հավաքականի 23-ամյա հարձակվող Լուիս Ալբերտո Սուարեսի հետ: «Այաքսում» հանդես եկող ֆուտբոլիստին «Զենիթը» տարեկան 3 մլն եվրո աշխատավարձ էր առաջարկել: Սակայն վերջինս հրաժարվել էր: Նա նշել էր, որ եթե «Այաքսից» հեռանալու խնդիր առաջանա, ապա կտեղափոխվի «Մանչեսթր Յունայթեդ» կամ «Բարսելոնա»:

Ընթացիկ մրցաշրջանում Սուարեսը դարձավ եվրոպական առաջնությունների լավագույն ռմբարկուն՝ «Այաքսում» խփելով 36 գնդակ: Նա մեկ գոլով գերազանցեց «Ոսկե խաղակոշիկի» դափնեկիր, արգենտինացի Լիոնել Մեսիին: Պարզապես Հոլանդիայի առաջնության գործակիցը 1,5 է Իսպանիայի 2-ի դիմաց, ուստի Սուարեսը «Ոսկե խաղակոշիկի» համար պայքարում զիջեց Մեսիին: Ուրուգվայի ազգային հավաքականում անցկացրած 31 խաղում Սուարեսը 10 գոլի հեղինակ է դարձել:

Մեծ Բրիտանիան դեմ էր ԿԺԴՀ-ի մասնակցությանը

Վերջերս գաղտնազերծված փաստաթղթերը վկայում են, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը ցանկացել էր ամեն գնով թույլ չտալ կոմունիստական ԿԺԴՀ-ի հավաքականին մասնակցելու 1966-ին Անգլիայում կայացած աշխարհի առաջնությանը: Անգլիացիները վախենում էին, որ դրանով փաստորեն կընդունվեր այդ երկրի ճանաչումը: Սակայն ՖԻՖԱ-ն միջամտեց եւ ԿԺԴՀ-ի հավաքականը մասնակցեց առաջնությանը՝ հասնելով մինչեւ քառորդ եզրափակիչ, խմբային մրցաշարում հաղթելով իտալացիներին:

ՇԱԽՄԱՏ

Մնաց մեկ տուր

Իսպանիայում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Գաբրիել Սարգսյանը հաշտություն կնքեց Ֆաբիանո Կարուանայի հետ: Գաբրիելը 3,5 միավորով 3-5-րդ տեղերն է բաժանում Վլադիմիր Մալախովի եւ Ֆաբիանո Կարուանայի հետ:

Ոչ-ոքի ավարտ ունեցան նաեւ Կրամլինգ-Կանդելարիո, Սալգադո-Մալախով պարտիաները: Միակ հաղթանակն իր օգտին գրանցեց Իվան Չեպարինովը՝ առավելության հասնելով Դեյսի Կորիի նկատմամբ: Այդ հաղթանակի շնորհիվ Չեպարինովը 5 միավորով ամրապնդեց առաջատարի իր դիրքը: Մրցաշարի հաղթող ճանաչվելու համար նրան անհրաժեշտ է կես միավոր վաստակել Պիա Կրամլինգի հետ ավարտական տուրում կայանալիք պարտիայում: 4 միավորով 2-րդ տեղում է Իվան Սալգադոն: Ավարտական տուրում Սարգսյանը կմրցի կուբացի Մանուել Պերես Կանդելարիոյի հետ:

Քոթանջյանը բաժանեց 4-8-րդ տեղերը

Գրոսմայստեր Տիգրան Քոթանջյանը մասնակցեց Իրանի Մեհրեդ քաղաքում անցկացրած շախմատի մրցաշարին: Անցկացրած 11 հանդիպումներում նա վաստակեց 8 միավոր եւ Գլեյզերովի, Ահմադինիայի ու Տիվյակովի հետ բաժանեց 4-8-րդ տեղերը:

Չինացի մարզուհիները մրցակցությունից դուրս են

Ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում մինչեւ 63 կգ քաշային կարգում կանանց մրցավեճում հաջողությունը կրկին ուղեկցեց չինացի մարզուհուն: Երկամարտի 223 կգ (98+125) արդյունքով աշխարհի չեմպիոնուհի հռչակվեց Յաթինգ Լին: 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի Տիմա Տուրեւան՝ 217 կգ (98+119): Բրոնզե մեդալը նվաճեց բելառուսցի Զինա Սազանավեցը՝ 212 կգ (94+118):

Մինչեւ 77 կգ քաշային ծանրորդների մրցավեճում մրցակցությունից դուրս էր իրանցի Կյանուշ Ռուստամին, որը երկամարտում ցույց տվեց 347 կգ (160+187) արդյունք: Հաղթողին 16 կգ-ով զիջեց ռուսաստանցի Վիկտոր Խարչենկոն: 3-րդ տեղը գրավեց ռուսաստանցի մեկ այլ ծանրորդ՝ Ալբերտ Սայախովը՝ 330 կգ (150+180):

Մեսին ամենաթանկ ֆուտբոլիստն է

Ֆուտբոլի աշխարհի 19-րդ առաջնության ամենաթանկ ֆուտբոլիստն Արգենտինայի հավաքականի եւ «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին է: Նրա տրանսֆերային արժեքը 80 մլն եվրո է: Ցուցակում 2-րդը պորտուգալացի Քրիստիանու Ռոնալդուն է (75 մլն): Լավագույն եռյակը եզրափակում է Իսպանիայի հավաքականի կիսապաշտպան Խավին (65 մլն):

Լավագույն տասնյակում տեղ են գրաղեցրել նաեւ իսպանացի Ինիեստան (60 մլն), անգլիացի Ուեյն Ռունին (53 մլն), ֆրանսիացի Ֆրանկ Ռիբերին (50 մլն), անգլիացի Սթիվեն Ջերարդը (50 մլն), իսպանացի Ֆեռնանդո Տորեսը (50 մլն), բրազիլացի Կական (50 մլն) եւ անգլիացի Ֆրենկ Լեմփարդը (45 մլն):

Առաջնության մասնակից 32 հավաքականներում հայտավորված 736 ֆուտբոլիստների տրանսֆերային ընդհանուր արժեքը 5,2 մլրդ եվրո է:

ՀԱՀ-ում կողոպուտները շարունակվում են

ՀԱՀ-ում ընթացող աշխարհի առաջնության ժամանակ շարունակվում են կողոպուտները: Նորզելանդացի հեռուստամեկնաբաններին կողոպտել էին Ռուստենբուրգի հյուրանոցում՝ առեւանգելով 100 հազար դոլար արժողությամբ սարքավորումներ: Լրագրողներն ընթրում էին հյուրանոցի ռեստորանում, իսկ կողոպտիչները կոտրել էին համարի դուռն ու տարել սարքավորումները: Հիշեցնենք, որ մինչ այդ գիշերով թալանել էին իսպանացի եւ պորտուգալացի լրագրողներին: Կողոպտիչները Զիմբաբվեից էին, որոնք արդեն դատապարտվել են:

Կողոպտիչների զոհ է դարձել նաեւ Ուրուգվայի հավաքականը: Ֆրանսիայի հավաքականի հետ խաղում նրանք մտել էին հավաքականի պաշտոնական երկու անձանց՝ Էռնեստո Ռոդրիգեսի եւ Դանիել Մարոտայի համարները: Առաջինից գողացել էին 30740 ռենդ (7,5 ռենդ=1 դոլարի), երկրորդից՝ 61,480 ռենդ: Հետաքրքրականն այն է, որ Ուրուգվայի պատվիրակությունը ոստիկանություն չէր դիմել:

Վիլյան ձգտում է ռմբարկուի տիտղոսին

Իսպանիայի հավաքականի հարձակվող Դավիթ Վիլյան վստահ է, որ «Վալենսիայից» «Բարսելոն» տեղափոխությունը կօգնի իրեն ավելի լավ դրսեւորել աշխարհի առաջնության հանդիպումներում: Վիլյան հավաքականում էլ աչքի է ընկնում բարձր արդյունավետությամբ՝ 59 խաղում խփելով 38 գոլ: Նա երազում է գերազանցել Ռաուլի ռեկորդը, որը հավաքականում անցկացրած 102 խաղում 44 գոլի հեղինակ է դարձել: Քանի որ ազգային հավաքականի մյուս հարձակվող Ֆեռնանդո Տորեսը նոր է աղաիինվել վնասվածքից, ուստի գլխավոր հարվածային ուժը Վիլյան է: Վերջինս շատ է ցանկանում դառնալ աշխարհի առաջնության լավագույն ռմբարկու:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 18/06/2010 20:10 Page 1

Վուդրո Վիլսոնի անվան մրցանակ Դավութօղլուին

1-ին էջից

Պարգեւատրումից հետո շնորհակալական խոսք է ասել արտգործնախարար Դավութօղլուն, ապա խոսքը շարունակել է Վուդրո Վիլսոնի ատ-խարհայացքի վերաբերյալ ելույթով: Նա նշել է, որ Վիլսոնը, ինչպես եւ ինքն է, եղել է կրթության գործիչ, կարողացել է բոլորին ցույց տալ «պետության կառավարման սերտ առնչությունը ուսուցմանը»:

Դավութօղլուն ուշադրություն է հրավիրել իդեալիզմի եւ ռեալիզմի միջեւ Վիլսոնի հաստատած ամուր կապի վրա, ապա եւ շարունակել է. «Ազգերի լիգայի մասին Վիլսոնի առաջ քաշած գաղափարն սկզբում դիտարկվում էր որպես ուտոպիա, սակայն իրականացավ: Ակնհայտ է նաեւ մեր իդեալը. «Նորմալացնել մեր պատմությունն ու ատ-խարհագրական միջավայրը: Շրջակայքում չենք ուզում շրջափակում, սպառազինում չենք ուզում: Միջուկային զենք՝ նմանապես: Ուզում ենք, որ հաշտություն լինի: Հենց այս տեսանկյունից ենք մոտենում Հայաստանին: Սա է նաեւ Հունաստանի նկատմամբ մեր մոտեցումը: Անցյալ ամիս Հունաստանի հետ ստորագրեցինք 22 պայմանագիր: Պայմանագրեր ենք ստորագրել նաեւ Ռուսաստանի ու Իրանի հետ»:

Դավութօղլուն ելույթում անդրադարձել է նաեւ տարածաշրջանում Թուրքիայի դերակատարությանը, ընդգծել է, որ իր երկիրը չի կարող անտարբեր լինել տարածաշրջանային զարգացումների հարցում, ավելացնելով. «Որքան մենք ջանում ենք խաղաղությանն ուղղված քայլեր կատարել, այնքան մեծ աղմուկ-աղաղակ են բարձրացնում, թե Թուրքիան շեղվում է ուղեծրից: Հավանաբար նրանք, ովքեր անցյալում կարդացել են Վիլսոնի գրածները, նրանց մեջ էլ առաջացել է հետեւյալ հարցը. «Մի՞թե փոխվում է ԱՄՆ-ի ուղեծիրը»: Եթե ատ-խարհն է փոխվում, չենք կարող հաստատուն մնալ փոփոխվող հատակում: Անփոփոխը մեր սկզբունքներն են: Մենք գլոբալ խաղաղության կողմնակիցների կողքին ենք: Դեմ ենք նրանց, ովքեր սպառնում են խաղաղությանը: Ոչ ոք չի կարող մեզ մեղադրել՝ գաղափարախոսությունը փոխելու մեջ»:

Ի դեմ, պարգեւատրման արարողության պատվավոր հյուրերից «Հիաթ գրուպի» գործադիր տնօրեն Թովմաս Պրիցկերը Պենի Պրիցկերի զարմիկն է, իսկ Պենին՝ Բարաք եւ Միշել Օբամաների մերձավոր ընկերը: Ինքը՝ որպես կին գործարար, միաժամանակ հանդիսանում է «Դողուշ հոլդինգի» գործադիր տնօրեն Ֆերիթ Շահենգի տիկնոջ՝ Դիանա Շահենգի ջերմ բարեկամը, նույնքան ջերմ է Թուրքիայի նկատմամբ նրա հիացմունքը:

Այսինքն՝ Դիանա Շահենգն Օբամաների ընկերոջ՝ Պենիի միջոցով ավելի հեշտ է ներթափանցում Սպիտակ տուն, ինչպես «Գազեթե պորտն» է վկայում, քան Թուրքիայի արտգործնախարարությունը: Ինչ վերաբերում է Ժակ Կամիհին, ապա իսլամական շրջանակները որքան էլ նրան համարեն Թուրքիայում սիոնիզմի ներկայացուցիչը, ատ-խարհի տարբեր երկրների էլիտայի վրա ունեցած ազդեցության շնորհիվ թուրքական պետության օգտին ամենաարդյունավետ լոբբիստական գործունեությունը հենց ինքն է ծավալում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
2010 թ. հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2010 թ. հունիսի 8-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Ահարոն Ջիլինգարյանը, Աշոտ Մկրտչյանը, Անդրանիկ Նորեկյանը, Վախթանգ Աբրահամյանը:

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային եւ դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: Մակրոնտեսական ցուցանիշների միտումները մայիսին եւս համահունչ էին ԿԲ կանխատեսումներում նախանշված ուղղություններին: Տարեսկզբից դրամավարկային պայմանների շարունակական խստացումն արտացոլվել է գնաճի ցուցանիշում. 12-ամսյա գնաճը նվազել է կանխատեսվածից ավելի արագ տեմպերով: Չնայած գնաճային միջավայրի պահպանման ռիսկերին՝ մոտակա ամիսներին գնաճի տեմպերը կշարունակեն նվազել՝ պայմանավորված արտաքին հատվածից եկող ազդակներով:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2010 թ. մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ արձանագրվել է 1.0% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը, նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատությամբ, նվազել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 6.3%: Ընդ որում, պարենային ապրանքների գներն աճել են 1.8%-ով (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 0.9%-ով (նպաստումը գնաճին՝ 0.15 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով (նպաստումը գնաճին՝ -0.1 տոկոսային կետ): Մայիսին արձանագրված գնաճը հիմնականում պայմանավորվել է գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների աճով, որի նպաստումն ընդհանուր գնաճին կազմել է 0.9 տոկոսային կետ: Ծառայությունների սակագների նվազումը հիմնականում պայմանավորվել է օդային տրանսպորտի ուղեվարձի նվազմամբ: Մայիսին գների աճ է արձանագրվել «Հրուշակեղեն», «Մսամթերք», «Կոշկեղեն», «Հագուստ եւ գործվածք» ապրանքախմբերում՝ գնաճին շուրջ 0.2 տոկոսային կետ ընդհանուր նպաստմամբ: Գնաճը որոշ չափով զսպվել է ձվի եւ շաքարավազի գների անկման արդյունքում:

ՀՆԱ իրական աճը հունվար-ապրիլին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կազմել է 7.2%: Նման բարձր ցուցանիշը ձեւավորվել է ինչպես մակրոնտեսական իրավիճակի բարելավման, այնպես էլ 2009 թ. նույն ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ի կտրուկ նվազման բազային ազդեցության արդյունքում: Բացի գյուղատնտեսությունից իրական աճ է արձանագրվել տնտեսության մյուս ճյուղերում. արդյունաբերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 9%, շինարարությունում՝ 19.1%, ծառայությունների ոլորտում՝ 6% աճ: Գյուղատնտեսությունում արձանագրվել է ավելացված արժեքի 6% անկում՝ պայմանավորված բուսաբուծության ենթաճյուղում 19% անկմամբ:

Շարունակվել է արտաքին առեւտրի աճը. հունվար-ապրիլին արտահանման 64.3% աճը ձեւավորվել է մետաղների միջազգային գների բարձր մակարդակի (չնայած մայիսին դրանց դոլարային գների որոշ չափով նվազմանը), խոշոր արտահանող ճյուղերին Կառավարության աջակցության, ինչպես նաեւ նախորդ տարվա ընթացքում արտահանման կտրուկ նվազման բազային ազդեցություններով: Ներմուծումը հունվար-ապրիլին ավելացել է 24.4%-ով՝ հիմնականում ներդրումային ապրանքների եւ վառելիքի ներմուծման ծավալների ավելացման հաշվին:

Ներկայացվեցին նաեւ ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները: Մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է դոլարայնացման մակարդակի նվազում. դրամով ավանդներն ավելացել են 0.1%, արտարժույթով ավանդները նվազել են 3.5%-ով: Չնայած դրան, ամսվա ընթացքում տրամադրված արտարժույթով վարկերի ծավալները գերազանցել են դրամով վարկավորման ծավալները:

Տարեսկզբից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման եւ փողի առաջարկի խիստ կարգավորման պայմաններում միջբանկային ռեպո շուկայում տոկոսադրույքները ապրիլի վերջին հասան դրամավարկային քաղաքականության խստացման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում առավելագույն մակարդակին, իսկ մայիսին որոշակիորեն ճշգրտվեցին նվազման ուղղությամբ: Ի տարբերություն միջբանկային ռեպո շուկայի պետական պարտատոմսերի առաջնային շուկայում տոկոսադրույքները, տեղաբաշխման ընթացքում ծավալների կրճատման պարագայում մնալով կայուն, դրամավարկային պայմանների խստացմանն արձագանքել են ավելի ուշ՝ սկսելով աճել միայն ապրիլի վերջին:

Արդյունքում, մայիսին ֆինանսական շուկայում արձանագրվեց հետեւյալ պատկերը՝ ՊՊ առաջնային եւ երկրորդային շուկաներում արձանագրվել են տոկոսադրույքների աճ, մասնավորապես, ՊՊ առաջնային շուկայում մինչեւ 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի տոկոսադրույքներն աճել են 3.2 տոկոսային կետով, իսկ 3-5 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերինը՝ 0.91 տոկոսային կետով: Ռեպո շուկայում նկատվել է հակառակ միտումը՝ տոկոսադրույքները նվազել են 1.43 տոկոսային կետով:

Իրավիճակային հաշվետվության ներկայացումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին եւ ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Քննարկվեցին գնաճի ցուցանիշի վրա մինչեւ տարեվերջ տնտեսության ներքին եւ արտաքին հատվածներից եկող լրացուցիչ ճնշումները: Գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների կանխատեսվածից ավելի բարձր հավանական աճը որոշ չափով կչեզոքացվի մասնավոր հատվածի ծախսումների նվազմամբ:

Արտաքին հատվածից եկող ազդակները գնանկումային են՝ պայմանավորված հումքային եւ պարենային ապրանքների միջազգային գների նվազմամբ եւ դրամի փոխարժեքի վարքագծով: Այդուհանդերձ, արտաքին հատվածում ակնկալվող զարգացումներն էապես նվազեցնում են նշված ապրանքների գների, ինչպես նաեւ ընդհանուր իրավիճակի վերաբերյալ կանխատեսումների հավաստիությունը: Մասնավորապես, 2010 թ. մայիսին կրկին սրվեցին ֆինանսական ճգնաժամի կրկնվելու ռիսկերը՝ պայմանավորված որոշ եվրոպական երկրների պետական պարտքի կայունության խնդիրների առաջացմամբ: Այս զարգացումների պայմաններում ԱՄՆ դոլարն էականորեն (ապրիլի նկատմամբ՝ 7%-ով) արժեւորվեց եվրոյի նկատմամբ: Նկարագրված իրավիճակում առաջատար երկրների կենտրոնական բանկերը դեռեւս պահպանում են վերաֆինանսավորման տոկոսադրույքի ցածր մակարդակը, թեեւ դադարեցրել են քանակական ընդլայնման քաղաքականության պայմաններում կիրառվող որոշ գործիքների օգտագործումը: Անդրադառնալով ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի արժեզրկման ներկայիս միտումների՝ ՀՀ տնտեսության վրա հնարավոր ազդեցություններին, խորհուրդը նշեց, որ ներկա անորոշությունների գերակայության պայմաններում կշարունակի հետեւել իրավիճակի զարգացումներին:

Անդրադառնալով գնաճի հետագա զարգացումներին եւ դրամավարկային քաղաքականության ուղղություններին՝ խորհուրդն ամփոփեց, որ թեեւ պահպանվում է գնաճային միջավայրը՝ կապված 2009 թ. իրականացրած դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների ընդլայնողական ազդեցությունների փոխանցման հետ, այնուամենայնիվ, մոտակա ամիսներին, գնաճի տեմպերը նվազելու են՝ պայմանավորված հումքային եւ պարենային ապրանքների միջազգային գների նվազմամբ եւ դրամի փոխարժեքի վարքագծով: Այս իրավիճակում խորհուրդը քննարկեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը անփոփոխ թողնելու եւ 0.25 տոկոսային կետով բարձրացնելու տարբերակները: Խորհուրդը շեշտադրեց, որ առկա են անորոշություններ տնտեսության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միջավայրում: Եվրոմիության անդամ որոշ երկրների պարտքային հիմնախնդիրների հետեւանքների վերաբերյալ տարաբնույթ սպասումներն էապես ավելացրել են հումքային եւ պարենային ապրանքների միջազգային գների ապագա վարքագծի անորոշությունները: Մյուս կողմից դեռեւս անորոշ է գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների վարքագիծը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ խորհուրդը նպատակահարմար գտավ ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների փոփոխություններից եւ անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.25%:

Նիստի ընթացքում անդրադարձ եղավ մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքներին: Խորհուրդը որոշեց նվազեցնել լոմբարդային ռեպո տոկոսադրույքը 2 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10.25%՝ նպատակ ունենալով վերադառնալ քաղաքականության հիմնական գործիքի տոկոսադրույքից մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքների հավասարաչափ՝ +/-3 տոկոսային կետով հեռացված լինելու սկզբունքին: ԿԲ կողմից առեւտրային բանկերի միջոցների ներգրավման տոկոսադրույքը մնաց անփոփոխ՝ 4.25%:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ռիելթոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<ԱՌԷՔՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ>> ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Բնակարան: Հասցե՝ ք. Արմավիր, Ջարենցի փող., շենք 5, թիվ 21: Մեկնարկային գինը՝ 12500000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետ հոլանդական եղանակներով՝ ք.Եր ան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 22.07.2010թ-ից մինչ 31.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Ա. Լ. Մնջոյանի Գյումրի ՀԷԿ» ՍՊԸ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ էլեկտրական էներգիայի արտադրության սակագնի վերանայման հայտով:

Գործող սակագինը	9.89 դրամ/ԿՎՏԺ (ներառյալ ԱԱՀ)
Առաջարկվող սակագինը	11.32 դրամ/ԿՎՏԺ (ներառյալ ԱԱՀ)

ք. Երեւան, Մոսկովյան 20, հեռ. 52-37-38 ֆաքս 58-20-17

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.06.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: